№ 63 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 20

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 20 № 63

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարտի 23-ին, կիրակի, երեկոյեան ժամը 6-ին, Թիֆլիսի բօրսայի դահլիճում նշանակված է

Կաթողիկոսական ընտրութեան հարցի համար

ԺՈՂՈՎ,

որին ներկայ կարող են լինել այդ ընտրութեան կողմնակից անձինք, ստանալով առաջուց անուանական հրաւիրատոմս, որի համար պէտք է դիմել հայոց բարեգործական ընկերութեան գրասենեակը պ. Ս. Յարութիւնեանին, կամ «Մշակի խմբագրութիւն՝ պ. Հ. Առաքելեանին, իսկ ժողովի օրը՝ բօրսայի շէնութեան մէջ: Այդ ժողովին պ. Լէօն կը կարդայ մի պատմական տեսութիւն կաթողիկոսական հարցի մասին:

(Ն. 2.) առ. 2—1

ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՌԻՒ

Մենք յաճախ ականատես ենք այն բանին, որ «գիտակցութիւն և կռիւ» հասկացողութիւնները միմեանց հետ խառնվում են և առաջացնում կեանքի մէջ մի շարք թիւրիմացութիւններ:

Վերջին ժամանակներս այդպիսի թիւրիմացութիւններ առաջ են գալիս դասակարգային գիտակցութեան գաղափարի առիթով մեր իրականութեան մէջ, որովհետև գիտակցութիւն բառը հասկացվում է նոյնանիշ մտքով դասակարգային կռւի վերաբերութեամբ:

Նոյնատեսակ թիւրիմացութիւններ առաջ են գալիս նաև ազգային, և քաղաքացիական «գիտակցութիւն» հասկացողութիւնների հետ:

Մենք գիտենք, որ որոշ դէպքերում «գիտակցութիւն և կռիւ» հասկացողութիւնները շօշափում են միմեանց շատ սերտ կերպով և ընդգրկում միմեանց, բայց այդ հանգամանքը չը պէտք է այնուամենայնիւ նոյնանիշ դարձնէ նրանց:

Կանգ առնենք նրանցից իւրաքանչիւրի վրա:

Ազգային գիտակցութիւն:

Ազգերը միմեանց հետ մրցում են, մաքառում են և երբեմնապէս պատերազմի դաշտ դուրս գալիս միմեանց դէմ. բայց մենք գիտենք, որ նրանք միևնոյն ժամանակ աշխատում են այնպիսի դրութիւն ստեղծել, որ նրանցից իւրաքանչիւրի շահերը ապահովված լինեն խաղաղ կեանքի պայմաններում:

Իւրաքանչիւր ազգ պարտաւոր է գիտակցել իր վիճակը, իր դիրքը, իր շահերը և իր գոյութեան պայմանները: Նա և պէտք է աշխատէ այդ գիտակցութեան հիման վրա մշակել գործունէութեան ծրագիրներ և ապահովել իր զարգացման գործը: Բայց այդ գիտակցութիւնը չը պէտք է նոյնանիշ լինի ազգային կռւի գաղափարի հետ: Կռիւը, պատերազմը չարիքներ են, որոնց հետ մարդիկ հաշտվում են միայն այն դէպքերում, երբ սպառված են լինում բանակցութիւնների և խաղաղ մաքառումների բոլոր ճանապարհները և թւում է, թէ այլևս ոչ մի միջոց չէ մնացել հարթելու ընդհարվող շահերը:

Ազգային գիտակցութիւնը մանաւանդ սիրելի և թանգագին կը լինէր, երբ նա ոչ միայն նոյնանիշ չը լինէր ազգային կռիւների հետ, այլև նա կարող լինէր ոչնչացնել կռիւները ապագայում:

Դասակարգային գիտակցութիւն:

Անշուշտ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր դասակարգ գիտակից լինի իր շահերի վերաբերութեամբ և կարողանայ պաշտպանել այդ շահերը: Բայց դեռ դա չէ նշանակում թէ մի դասակարգ իր գոյութեան համար պէտք է անարգէ և ֆիզիքական ույժով ոչնչացնէ միւս դասակարգերը: Դասակարգերի ինքնագիտակցութիւնը պէտք է ստեղծէ մաքառումներ խաղաղ կեանքի հողի վրա և առաջ բերէ բարեփոխութիւններ կեանքի մէջ կուլտուրական ճանապարհներով: Այդ հետևանքին հասնելու պէտք է նպաստեն օրէնքների համապատասխան փոփոխութիւնները պարլամենտի միջոցով, գործատուի և գործաւորի բանակցութիւնները տնտեսական հաշիւների և փոխադարձ շահերի քննութեան խելացի հիմքերի վրա, և մի շարք ջանքեր պատրաստելու հող արդիւնագործական համայնական գործառնութիւնների համար, որոնք և պէտք է գան հաստատելու նոր տնտեսական դրութիւն իրականութեան մէջ:

Քաղաքացիական գիտակցութիւն:

Իւրաքանչիւր քաղաքացի պէտք է գիտակից լինի իր անհատական իրաւունքների, իր բարոյական-քաղաքական շահերի նկատմամբ. բայց դա չէ նշանակում, որ այդ գիտակցութիւնը և իր իրաւունքների ու շահերի պաշտպանելու պատրաստականութիւնը պէտք է մշտական կռիւներով և եղբայրասպան արհաւիրքներով արտայայտվի:

Ազգային, դասակարգային, քաղաքացիական և այլ տեսակի գիտակցութիւնները պէտք է նպատակ դնեն խուսափելու ֆիզիքական, բիրտ ընդհարումներից և պետական ու հասարակական խնդիրների լուծումը առաջ տանեն խաղաղ կուլտուրական ճանապարհներով:

Կռիւը իբրև սովորական գործելակերպ անընդունելի է: Կռիւը ծայրայեղ միջոց է, անխուսափելի չարիք է, որի ուրուականը պէտք է դրդէ գիտակից մարդկանց կազմակերպելու գործը այնպիսի խելացի հիմքերի վրա, որպէսզի տնտեսական և հասարակական խնդիրների լուծումը խաղաղ կուլտուրական շաւիղներից չընկնի ընդհարումների կրկէսը:

Անկասկած՝ ազգային, քաղաքացիական և դասակարգային գիտակցութիւնների ու կռիւների մէջ կան տարբեր բնաւորութեան տարրեր, և այն, ինչ որ կարելի է հաշտեցնել ազգային ու քաղաքացիական շահերի ասպարէզում, դժուարին կը լինի տնտեսական մաքառումների դաշտավայրում. բայց մենք այստեղ մանրամասն վերլուծութիւններով չենք զբաղված, այլ միայն կամենում ենք լուսաբանել հիմնական մի միտք, որ չը պէտք է մշտապէս խառնել «գիտակցութեան» հասկացողութիւնը «կռւի» հասկացողութեան հետ, ինչպէս այդ տեսնում ենք մեր իրականութեան մէջ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 18 մարտի

Թէ քաղաքումս և թէ ամբողջ Գանձակի նահանգում, շատ աննշան բացառութեամբ, 4—5 տարուց ի վեր, մեծ ընդունելութիւն է գտել Ստավրօպօլի Իվան Բարանով ֆիրմայի ալիւրը: Այդ ֆիրման վերջին ժամանակներս ալիւրի արժէքը աստիճանաբար բարձրացնելով ներկայ ահռելի գներին հասցրեց, չը նայած որ իր ստացած պատուէրներն էլ շատ անկանոն կերպով էր կատարում: Ներկայումս յիշեալ ֆիրման հեռագիր-հեռագրի ետևից է խփում տեղիս ալիւրավաճառներին՝ յայտնելով որ ալիւրի գներն իջեցնում է...

Սագան

—

«Освѣд. Бюро»-ն հերքում է այն տարածված լուրը, որ իբր թէ Մարիա Սպիրիդոնովան փախել է տաժանակիր աշխատանքներից:

—

Արփիարի սպանութեան առիթով

Նոր ստացված լուրերի համաձայն, Ա. Արփիարեանի մարդասպանի լուսանկարը, եգիպտական կառավարութեան հրամանով, արդէն հանված է:

Ոճրագործի մասին հետևեալ մանրամասնութիւններն են պատմվում: Նա Ամերիկայում ծանօթ էր Պետր Հիւսն անունով և Արփիարեանի սպանութեան գործում մի պարզ գործիք է եղել ուրիշների ձեռքին: Ոճրագործը հիւանդ դրութեան մէջ է գտնըվում, բոլորովին ընկճվել է ու մտածկոտ է դառել: Նա իր բանտապահներին շարունակ հարցնելիս է եղել, թէ արդեօք խուսափելի՞ է իր՝ կախաղանի արժանանալը:

Արփիարեանի սպանութեան պատճառով ինչպէս Եգիպտոսի, նոյնպէս և Ամերիկայի Միացեալ-Նահանգների կառավարութիւններից փնտռվող և հետապնդվող Արզուեան-Վահէն և Լևոն Լարենցը դեռ ևս չեն ձերբակալված:

Նոյն ոճրի առիթով ձերբակալված է Զաբէհ Գուչեան անուն մէկը, որի ամերիկահպատակ լինելը բոլորովին կեղծ է եղել և որի բնակարանից ահագին քանակութեամբ նամակներ ու լուսանկարներ են գտնված: Ձերբակալվածի բնակարանում բնակվող Արտաշէս Բէգլեան անունով մէկը, որին ևս ձերբակալելու կարգադրութիւն էր արված, անհետացել է Կահիրէից: Նոյնպէս անհետացել է «Ազատ Բեմ» լրագրի (Վերակազմեալ Հնչակեանների Արզուեան-Վահէ խմբակի Եգիպտոսի օրգանը) երբեմնի խմբագիր Մարտիկ Կարապետեանը, ինչպէս և Ալէքսանդրիայում բնակվող Մանուկեան ազգանունով մի անձ: Այս վերջինս, ընկերակցութեամբ Մարտիրոս Հացագործեանի, երեք տարի առաջ փորձել էր սպանել Ա. Արփիարեանին:

«Լուսաբեր»-ի տեղեկութիւնների համաձայն, Եգիպտոսի ամերիկական ընդհ. հիւպատոս Իգլինգօն ընդհանրապէս շատ աննպաստ կարծիք է կազմել ամերիկահպատակ հայերի մասին և հաստատ համոզվել է, թէ Թավշանճեանին ու Ա. Արփիարեանին սպանել տուողները միևնոյն կուսակցութեանն են պատկանում և այդ կուսակցութեան կենտրոնական օրգանն է Ամերիկայում հրատարակվող «Ջայն Հայրենեաց» անուն թերթը:

—

Գանձակ, 18 մարտի

Կիրակի, ամսիս 16-ին, գեներալ-նահանգապետը իր մօտ էր հրաւիրել հայ և թուրք քաղաքացիներից խառն ներկայացուցչութիւն, բացատրութիւն պահանջելու վերջին օրերումս տարածված արտասովոր շշուկների վերաբերեալ և ի միջի այլոց այն հանգամանքի շարժառիթով, որ ամսիս 14-ին հայերը չեն վստահացել թուրքաց մասը անցնելու... Ոչ ոք չը կարողանալով բացատրել շշուկների իսկական շարժառիթները ու մի շարք պրօվօկացիական տարածված անհիմն լուրերը, գեներալ-նահանգապետը կանգ է առնում լեզգիների մօտ գտնված սառը զէնքերի շուրջը: Թուրք ներկայացուցիչներից երկուսը՝ Ալիէքբէր բէգերը հերքում են սառը զէնքերի առասպելական լուրերը և դրանց թիւը հաշւում են մի քանի հատ: Սակայն նահանգապետը հրաւիրում է չը հաւատացողներին ցոյց տալու սառը զէնքերը: Ալիէքբէր-բէգ Ռաֆիբէկովը, ինչպէս և բոլոր թուրքերը յայտարարել են, որ այդ գործը սև-հարիւրեակային խմբի գործ է, և խնդրել են ցոյց տալ թաուցիկը. անմիջապէս մարդ է ուղարկվում փոխ-նահանգապետի մօտ, որի բացակայութեան պատճառով չեն բերվում: Ապա թուրք ներկայացուցիչները յայտնում են գեներալին ինչպէս միշտ՝ նոյնպէս ներկայումս իրանց հաւատարիմ հպատակութիւնը, որից յետոյ գեներալ-նահանգապետը յորդորելով պատւիրում է, որ ազգաբնակութիւնը խաղաղ իր գործին մնայ:

Սագան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

«Կովկասի փոխարքայութեան կողմից առաջիկայում ձեռք առնելիք միջոցների ամենագլխաւոր նպատակը,—ասված է դօկումենտներից մէկի մէջ,—պէտք է լինի տեղական արդիւնաբերական ույժերը բարձրացնելու հետ միասին՝ շուտափոյթ կերպով վերականգնել երկրի մէջ յեղափոխական խռովութիւնների շնորհիւ խախտված ժողովրդական խաղաղութիւնը և ամրապնդել ռուսաց պետական սկզբունքները Կովկասում՝ կուլտուրականապէս և քաղաքականապէս սերտ կերպով միացնելու նրան արմատական Ռուսաստանի հետ»:

Արդ, ինչպիսի միջոցներով է ուզում կառավարութիւնը հասնել իր նպատակներին: Ինչո՞վ կարելի է բնական հարստութիւններով առատ այդ երկրի և արմատական Ռուսաստանի կուլտուրական և քաղաքական միաձուլումը իրագործել: Թւում է, որ նախ և առաջ լուսաւորելով և ինքնավարութիւն տալով նրան ընդհանուր կայսրութեան հիմունքներով: Կովկասի Փոխարքան այդպէս էլ հասկացել է. նա ծրագրել է բանալ Թիֆլիսում բարձրագոյն դպրոց՝ պօլիտեխնիկում (լեռնային, գիւղատնտեսական, մեքենայ. և տնտ. բաժանմունքներով), իսկ յետոյ քառաստիճան զեմստվօ մտցնել (գիւղական, շրջանային, գաւառական և Կովկասի բոլոր տեղերը միացնող նահանգական) և, բացի դրանից, Փոխարքայի խորհուրդը վերակազմել ընտրողական դարձնելով (մօտ 30 ընտրեալ անդամներ և այդ թւի մօտ մի երրորդի չափ պետական անդամներ):

Սկզբունքով կենտրոնական կառավարութիւնը համաձայն է այդ միջոցներին, բացի վերջինից: Այնուամենայնիւ, այդ «սկզբունքային» համաձայնութիւնը արտայայտվում է այնպիսի էական «բայց»-երով, որոնք բոլորովին կերպարանափոխում են նրանց ամբողջ բնաւորութիւնը: Կոմս Վօրոնցօվ-Դաշկօվը կարծում է, որ ինն միլիօն ազգաբնակութիւն ունեցող Կովկասը չէ կարելի թողնել առանց բարձրագոյն դպրոցի, ստիպելով բարձրագոյն կրթութիւն ստանալու ձգտող տեղական բնակիչներին թողնել իրանց ընտանիքները, գնալ ուրիշ քաղաքներ և նոյնիսկ արտասահման: Այդ այդպէս է,—պատասխանում է կենտրոնական կառավարութիւնը,—բայց... փող չը կայ: Միևնոյն ժամանակ Հիւսիսային Կովկասի անմիջական հարևանութեամբ, Նովօչերկասկում հիմնվում է նոր պօլիտեխնիկում: Թող շարունակվի Փոխարքայի թոյլտւութեամբ հանգանակութիւնը. «Չի կարելի սկզբունքային հաւանութիւն չը տալ Փոխարքայի մտածած բարի դիտաւորութիւններին, և հիմք չը կայ զրկելու Կովկասի ազգաբնակութիւնը սեփական միջոցներով իր տեղում բարձրագոյն դպրոց ստեղծելու հնարաւորութիւնից»: Սակայն այդ բարձրագոյն դպրոցի բացումը կարելի է թոյլ տալ միայն այն դէպքում, «եթէ նուիրաբերութիւնները կը հասնեն այնպիսի խոշոր գումարի, որ նրանով կարելի լինի ապահովել ոչ միայն համապատասխան շէնութեան կառուցումը, այլ և այդ դպրոցի պահպանութիւնը»:

Abgemacht,—ինչպէս ասում են գերմանացիները:

Խուզված է, և այն էլ խուզված է շատ մաքուր:

Ապա որտեղ մնաց կուլտուրական միաձուլումը: Ի՞նչպէս և ի՞նչ եղանակով հասնել այդ նպատակին:

Զեմստվային հաստատութիւնների վերաբերմամբ էլ կրկնվում է միևնոյն պատմութիւնը... Տալով իր սկզբունքային համաձայնութիւնը, կենտրոնական կառավարութիւնը նախ և առաջ մատնացոյց է անում որ այդ հաստատութիւնները Կովկասի աղքատ ազգաբնակութեան վրա թանգ կը նստի: Ֆինանսների մինիստրութեան հաշւով, դրամական տուրքերը և հարկերը գիւղացիների այն հողերից, որոնց ամենամեծ մասը պատկանում է նրանց, արդէն այժմ զուտ եկամուտի 73 տոկոսն է կազմում:

Մինչդեռ, Փոխարքայի ծրագրած զեմստվօն մտցնելուց յետոյ, կը պահանջվի լրացուցիչ նոր տուրքեր սահմանել միայն հէնց զեմստվային մարմինները պահելու համար մօտաւորապէս կալուածատիրական իւրաքանչիւր դեսեատինին 1 ր. 78 կոպ. և գիւղացիներին պատկանող հողերի իւրաքանչիւր դեսեատինին 1 ր. 23 կ., որ վեր է ազգաբնակութեան ույժերից:

Վերջապէս ժամանակն էլ չէ զեմստվօ մտցնելու մասին մտածելու, երբ «համարեա Կովկասի բոլոր մասերը Փոխարքայի կարգադրութեամբ կամ թէ նրա յարուցած միջնորդութեամբ այժմ դրված են կամ պատերազմական դրութեան կամ արտակարգ պահպանութեան ներքոյ»:

Այնուամենայնիւ, յիշեալ ծայրագաւառում զեմստվօ մտցնելու դիտաւորութիւնը կենտրոնական կառավարութեանը թւում է արդարացի, սակայն նրա աջող իրագործման համար անհրաժեշտ է սպասել աւելի բարեբաստիկ ժամանակի և իրագործել նրան կարելւոյն չափ պարզ ու հասարակ ձևերով, որոնք աւելի են համապատասխանում՝ երկրի կուլտուրական ույժերին և տեղական ազգաբնակութեան չքաւորութեան»:

(«Рѣчь»)

ԱԼ. ԼԻՍՕՎՍԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարոն Ալ. Լիսօվսկու երրորդ դասախօսութիւնը Տուրգենևի մասին տեղի ունեցաւ ամսիս 18-ին: Այս անգամ աւելի մեծ բազմութիւն կար—դարձեալ մեծ մասամբ աշակերտներ—թատրօնում, քան նախորդ դասախօսութիւնների ժամանակ, և դասախօսն էլ աւելի ոգևորված ու կենդանի էր խօսում, քան նախորդ անգամներին:

Տուրգենևին համեմատութեան մէջ դնելով Դոստոևսկու և Տօլստոյի հետ, պ. Լիսօվսկին հետևեալ ձևով բնորոշեց այդ երեք գրողներին:

Դոստոևսկին միանգամայն կեանքի մէջ ապրող և գործող մարդ էր, այն ինչ Տուրգենևը միմիայն հեռուից դիտող մի անաչառ վկայ էր: Իսկ Տօլստոյը իր երիտասարդութեան հասակում, երբ նա «Պատերազմ և խաղաղութիւնն» էր գրում, նոյնպէս Տուրգենևի նման դիտող վկայի դերի մէջ էր, բայց վերջում նա էլ Դոստոևսկու նման գործող ու մարտնչող դարձաւ: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ կեանքի մէջ ակտիվ դեր կատարողները՝ գործիչները կամայ-ակամայ հետզհետէ աւելի ու աւելի նեղ սահմանների մէջ են պարփակվում, ուստի և անկարող են հանդիսանում կեանքի մէջ կատարվող շատ երևոյթները նկատել ու նրանց ըստ արժանոյն գնահատել, այդ պատճառով էլ նրանց հայեացքները միակողմանի են դառնում: Այն ինչ հեռուից դիտող վկայի աչքերից ոչ մի երևոյթ չէ սպրդում և նա աւելի անաչառ ու օբեկտիվ է լինում:

Տուրգենևը վերանորոգվող ռուսական կեանքի երեք շրջաններում տեղի ունեցած երևոյթների ու դէպքերի անաչառ դիտող վկան է ներկայանում իր գրուածքներով: Այդ երեք շրջաններն են՝ 40-ական թւականների իդէալիզմը, 60-ական թւականների նիհիլիզմը և 70-ական թւականների նարօդնիչեստվօն: Առաջին շրջանին վերաբերում են Տուրգենևի «Ռուդին» և «Ազնուականի բոյնը» (Дворянское гнѣздо) գրուածքները, երկրորդ շրջանին վերաբերում է՝ «Հայրեր և որդիքը», իսկ երրորդ շրջանին՝ «Անմշակ երկիրը» (Новь):

Պ. Լիսօվսկին Տուրգենևի երիտասարդութեան հասակում գրած մանր պատմուածքներին, որ վերջում լոյս տեսան մի գրքի մէջ «Որսորդի յուշերից» (Записки охотника) անունով, բոլորովին առանձին տեղ տուեց: Այդ գեղարուեստական պատմուածքներով,— ասաց նա,— Տուրգենևը զանազան անունների տակ դուրս է բերել միևնոյն ռուս ժողովրդական տիպերը. դրանցից մէկը շատ լաւ ծանօթ է մարդկային կեանքին ու կենցաղին, իսկ միւսը ընդհակառակը բնութեան զաւակ է ու ոչինչ չը գիտէ մարդկային կեանքի ու կենցաղի վերաբերեալ, այն ինչ նա շատ լաւ ծանօթ է բնութեանը. նա ծանօթ է թէ թռչունների և թէ գազանների կեանքին ամբողջ մանրամասնութեամբ, ինչպէս և ծանօթ է բոյսերին և գիտէ սրանց բոլորի բժշկական ու այլ յատկութիւնները:

Տուրգենևը այդ երկու տիպերը նկարագրելով,—ասաց պ. Լիսօվսկին,—գուցէ և անգիտակցաբար, սիմվօլիքական ձևով դուրս է բերել ռուս ժողովրդի երկու հատուածները՝ խաւար մասսան և ինտելիգենցիան: Եւ այդ սիմվօլիզմը շատ փայլուն կերպով արտայայտվում է նրա «Երգիչներ» պատմուածքի մէջ: Այստեղ պատմվում է, թէ ինչպէս որսորդը, մի ընդարձակ դաշտի միջով անցնելիս, հեռուից մի ինչ-որ զիլ ձայն է լսում, որը մի քանի անգամ կանչում է՝ Անտրիօշկա: Քիչ յետոյ անտառի խորքից մի այլ ձայն պատասխանում է՝ ինչ է: Առաջին ձայնը նրան տուն է կանչում, իսկ երկրորդը չէ գնում:

«Այդ կանչող ձայնը,—բացատրեց Լիսօվսկին,—սիմվօլիքաբար ռուս ինտելիգենցիան է ներկայացնում, որը Անտրիօշկային՝ ռուս խաւար ժողովրդին անտառից կանչում է դէպի քաղաքակրթութիւն ու լուսաւորութիւն: Բայց այն ժամանակ Անտրիօպկան չը գնաց իր եղբօր կանչին։ Սակայն նա կը գնայ յետոյ, քիչ աւելի ուշ, և այն ժամանակ նա այլևս չի կոչվի Անտրիօպկա, այլ կը կոչվի Անտրօպօս (յունարէն՝ մարդ)։

Դասախօսութեան երկրորդ մասում պ. Լիսօվսկին բացատրեց ռուսաց կեանքի վերյիշեալ երեք շրջանները և դրանց վերաբերեալ Տուրգենևի երեք կարգի գրուածքները։ Այդ շրջանները նա բնորոշեց այս ձևով. 40-ական թւականների իդէալիզմը Ռուսաստանում համապատասխանում է եւրօպական կեանքի ռօմանտիզմի շրջանին։ 60-ական թւականների ռուսական նիհիլիզմը եւրօպականի վերածնութեան դարն է, իսկ 70-ական թւականների նարօդնիչեստվօն—յեղափոխութեան շրջանն է։

Առաջին՝ իդէալիզմի շրջանում, երբ Ռուսաստանի քաղաքական ու սօցիալական պայմանները ամեն ինչ խեղդում էին, և հասարակական ու քաղաքական գործունէութեան ոչ մի ասպարէզ ու հնարաւորութիւն չը կար, բայց և որովհետև մարդիկ բնական պահանջ էին զգում անպատճառ մի որևէ գործ կատարել, ուստի նրանք, գործ անելու փոխարէն, ստիպված էին Ռուդինի նման միմիայն խօսելով բաւականանալ։ Ռուդինին և այն շրջանի նրա նըման մարդկանց չը պէտք է պոռստախօսներ կամ զեվզէկներ անուանել, որովհետև այն շրջանի մարդիկ ուրիշ հնար չը գիտէին և հաւատացած էին, թէ խօսելն ու գաղափարներ տարածելն էլ մի մեծ գործ է։ Բացի խօսելուց, 40-ական թւականների շրջանի մարդիկ միևնոյն ժամանակ շարունակ բարձր ու վեհ իդէալներ էին փնտռում, որպէսզի կարողանան իրանց ծարաւ հոգուն բաւականութիւն տալ և լրացնել այն պակասը, որ բաց էր թողում շնորհիւ շրջապատող հանգամանքների։ Իբրև այդպիսիների փայլուն տիպեր ներկայանում են Լավրեցկին և Լիզան «Дворянское гнѣздо» վէպի մէջ։

40-ական թւականների իդէալիզմին յաջորդում է 60-ական թւականների նիհիլիզմը։ Մարդիկ, չը կարողանալով իրանց փնտռած իդէալին հասնել, սկսում են հերքել, առ ոչինչ համարել իդէալները։ Նիհիլիզմը, սակայն, չը պէտք է այն իմաստով հասկանալ, ինչպէս որ սովորաբար գործ է ածվում։ Նիհիլիզմ—ամեն բան հերքել չէ նշանակում. նիհիլիստները հերքում էին միայն ամեն բան, ամեն գաղափար ու ամեն իդէալ կուրօրէն ընդունելու, հպատակվելու սովորութիւնն ու գաղափարը։ Նրանք ցանկանում էին, որ ամեն ինչ խիստ կրիտիկայի ենթարկվի, նախ քան համաձայնելն ու ընդունելը։ Եւ հէնց դրա համար էլ նրանք ամենից աւելի հերքում էին հեղինակութիւնը (աւտօրիտէտը)։ Նիհիլիստները շատ աւելի ռէալիստներ, նոյնիսկ մատերիալիստներ էին, ուստի աւելի ճիշտ կը լինի նրանց այդ անուններով անուանել, քան նիհիլիստներ ասել, որ թիւր հասկացողութիւններ է առաջացնում մարդկանց մէջ։

Իբրև նիհիլիստի ամբողջացրած տիպ, Բազարօվն է ներկայանում «Հայրեր և որդիք» վէպի մէջ, որին սակայն, պ. Լիսօվսկու կարծիքով, Տուրգենևը շատ նեղ շրջանակների մէջ է դրել. գործունէութեան աւելի լայն ասպարէզի մէջ դրված Բազարօվը շատ աւելի ռելիէֆ կարող էր դուրս գալ։

Ռուսական կեանքի երրորդ շրջանը, ինչպէս ասացինք, 70-ական թւականների նարօդնիչեստվօն է, երբ գիտակից ինտելիգենցիան, ռէալիզմի ու ամեն բան կրիտիկայի ենթարկելուց յետոյ, որոշում է յեղափոխութիւն առաջացնել և գնում է գիւղերը, ժողովրդի մէջ գործելու։

Այդ շրջանը հրաշալի կերպով նկարագրել ու դուրս է բերել Տուրգենևը «Անմշակ երկիր» վէպի մէջ։ Թէ ինչպէս էր ինքը Տուրգենևը վերաբերվում այդ շրջանի շարժումին, այդ շատ գեղեցիկ կերպով արտայայտել է նա հէնց էպիգրաֆի մէջ, որ նա դրել է այդ գրուածքի ճակատին, այն է՝ «Երկիրը լաւ մշակելու համար, ոչ թէ նրան պէտք է փոցխով հերկել երեսանց, այլ պիտի հերկել խոր՝ գութանով»։ Իսկ այդպիսի գութան հէնց նոյն գրուածքի մէջ ներկայանում է Սօլօմինի տիպը, որը միւս հինգ տիպերից, որոնք փոցխն են ներկայացնում, միանգամայն տարբերվում է։

«Ճիշտ է, Սօլօմինի տիպը շատ պարզ ու որոշ չէ,—ասաց պ. Լիսօվսկին,—ինչպէս միւս 5 տիպերն են, բայց դա պարզապէս նրանից է, որ այն ժամանակ Սօլօմինի տիպը իրականութեան մէջ գոյութիւն էլ չունէր. դա մեր ժամանակվայ գործիչների տիպն է, որ Տուրգենևը իր հանճարի զօրութեամբ կարողացել էր նախագուշակել ու նախագծել»։

Դասախօսութեան երրորդ մասը եզրափակումն էր ամբողջ երեք դասախօսութիւնների, որ կարելի է մի քանի խօսքով հետևեալ ձևով ամփոփել։

Թէ Դօստոևսկին, թէ Տօլստօյը և թէ Տուրգենևը, թէև տարբեր ուղղութեամբ և տարբեր ճանապարհներով, բայց միևնոյն ճշմարտութիւնն էին փնտռում։ Եւ նրանց գտնած ճշմարտութիւնը ոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ մարդկութեան համար է։ Ինչպէս որ հին Հռօմը ամբողջ աշխարհին տուեց իրաւունքի և օրէնքով ապրելու գաղափարը, ինչպէս որ Գերմանիան, Լիւտերի ռէֆօրմացիայի միջոցով, աշխարհին ցոյց տուեց խղճով ապրելու գաղափարը, այնպէս էլ երիտասարդ և մեծ Ռուսաստանը մարդկութեան համար պիտի գտնի ճշմարտութիւնը։

Ռեպօրտեօր

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին երկու տարվայ մեր կեանքի ալեկոծ փոփոխութիւնների երևոյթներից մէկն է Թիֆլիսի բաղանիքներում տիրող կարգերը, որը աւելի շուտով մենք կանուանենք անկարգութիւններ...

Մենք այստեղ առանց խտացնող գոյների կարձանագրենք իսկութիւնը՝ թողնելով ընթերցողներին եզրակացութիւնը—արդեօք տիրողը «կարգե՞ր» են թէ «անկարգութիւններ»։

Թիֆլիսում գոյութիւն ունեն մի շարք բաղանիքներ, որոնց ջուրը հանքային է (ծծմբային) և որի բուժիչ ահագին նշանակութիւնը ամեն կասկածից դուրս է. նմանօրինակ ջրեր ամբողջ Ռուսաստանում կան միայն Աբասթումանում, Պեատիգօրսկում և որքան գիտենք Սլավինսկում (Խարկօվի նահ.). այդ ջրերը բնականից արդէն բըղխում են տաք և հարկաւոր չէ ծախս անել տաքացնելու։ Ահաւասիկ այդ հանքային ջրերով բանեցվող բաղանիքներում աշխատում են որոշ քանակութեամբ քիսաչիներ և այլ՝ գործին հարկաւոր աշխատաւորներ։

Վերջին երկու տարին այդ աշխատաւորները ի մի հաւաքվելով որոշեցին յանուն իրանց դասակարգային շահերի աշխատել առաւօտվանից մինչև գիշերվայ ժամը 10-ը՝ որից յետոյ անպայման փակել բաղանիսները հետևեալ պատճառաբանութեամբ.—աշխատաւորներին հարկաւոր է հանգստութիւն և որ եթէ բաղանիսները սահմանափակ ժամերում բաց լինեն՝ աշխատաւորները շարունակ զբաղված կը լինեն անընդհատ յաճախորդներով։

Պէտք է խոստովանեմ, որ այդ մի խումբ աշխատաւորների հաշիւները սոսկ իրանց շահի տեսակէտից կատարելապէս ճիշտ են. բայց խնդրին մօտենանք աւելի լայն—ազգաբնակութեան յարմարութեան, այդ մի խումբ գործ ունեցող ընկեր բազմաթիւ անգործ բանւորների և վերջապէս տնտեսական, արդիւնաբերական և ժողովրդական առողջապահական տեսակէտից. տեսնենք արժէ՞ բազմակողմանի և բազմաթիւ մարդկանց շահերը զոհել մի բուռը մարդկանց շահերին...

Նախ և առաջ տեսնենք գո՞հ է այս դրութիւնից ազգաբնակութիւնը։

Ոչ և ոչ, հազար անգամ ոչ... Ազգաբնակութիւնը առանց սեռի և դասակարգի խտրութեան դժգոհ է այս ներկայ կարգերից և ահա թէ ինչու. նախ Թիֆլիսի աշխատաւորների համար ամենայարմար ժամանակն է բաղանիս գնալու աշխատանքից ազատ ժամերին, իսկ այդպիսին հաշւվում է վաղ առաւօտեան մինչև ժամը 7-ը և երեկոյեան 6—7-ից յետոյ, հէնց այն ժամերին, երբ կամ բաղանիսները կողպված են, կամ շուտով պէտք է փակվեն. և ահաւասիկ երեկոյեան 6-ից մինչև 10-ը կատարեալ պատերազմ է բաղանիսի թաղում մինչև հերթ բռնելը, և պէտք է բաղդաւորութիւն համարել, եթէ մտադրված և բաղանիք գնացած օրդ «համար» ձեռք գցես լողանալու համար. թէ չէ՝ յաճախ ժամեր սպասելուցդ վերջը՝ ստիպված պէտք է լինես վերադառնալ դատարկաձեռն տուն... Այս դեռ առանձին համարները. իսկ ընդհանուր լողարաններում հօ կատարեալ բաբելոնեան խառնակութիւն է, այնքան շատ են թափվում երեկոները ժամը 6-ից յետոյ...

Մեզ գոնէ չէ պատահել բաղանիս յաճախող մի անձնաւորութիւն, որ հազար անգամ նզոված չը լինի այդ կարգերը... Այսպիսով, շնորհիւ տիրող կարգերի, ժողովուրդը ստիպված է ժամերով սպասել լողանալու հերթին և հետևապէս զզուելով այս բոլորից, սակաւացնել լողանալու թիւը և երկարացնել ժամանակամիջոցները սպասելու անախորժութիւնից ազատելու համար...

Իսկ գիւղերից եկող խեղճ ու կրակ աշխատաւորները... Առաջները սովորաբար այսպէս էր. զանազան գաւառներից եկող գիւղացիք կամ բերած ապրանքը ծախելու կամ ձեռաց ապրանք գնելու և Թիֆլիսից հեռանալու համար՝ փոխանակ քարվանսարայ իջնելու կամ իրանց ձիաների, էշերի հետ թօվլաներում պառկելու՝ գնում էին բաղանիս համ լողանալու, մաքրվելու, համ էլ ամբողջ գիշերը լողանալու վարձով այնտեղ քնելու. այժմեան կարգերը տիրապետելուց, այդ ահագին քանակութեամբ եկւոր գիւղացիները թէ աւելորդ ծախսերի տակ են ընկնում և թէ միևնոյն ժամանակ զրկվում հնարաւորութիւնից իսպառ բաղանիք գնալու. չէ՞ որ մեզ բոլորիս գաղտնիք չէ, որ առանց բացառութեան մեր գիւղերը համարեա բոլորը բաղանիք չունեն...

Այսպիսով ուրեմն ազգաբնակութիւնը կատարելապէս տուժում է տիրող կարգերից և հնարաւորութիւն չունի կարիքի համեմատ օգտվելու բաղնիսներից։

Բաղնիսների աշխատաւորները պահանջում են, որ իրանց հանգստանալու բաւականին ժամեր տան։ Կատարեալ արդարացի պահանջ։ Թող բանեն միմիայն ութ ժամ. ո՞վ է նրանց արգելում. միայն թէ նրանք ոչ մի բարոյական և իրաւական իրաւունք չը պէտք է ունենան արգելել ազատ եղող բանւորներին աշխատել նրանց հանգստանալու ժամերին. դիցուք այժմեան աշխատաւորները գնալու են հանգստանալու գիշերվայ ժամը 10-ին, այնուհետև հետևեալ խումբը իրաւունք պէտք է ունենայ բանել գիշերվայ 10-ից մինչև առաւօտեան ժամը 6-ը, իսկ մի երրորդ խումբ առաւօտեան 6-ից մինչև ճաշվայ 2-ը։ Չէ՞ որ այժմեան անգործ բանւորները ևս աշխատանք են ուզում, նրանք ևս ոչ թէ միայն հանգիստ, այլև ուտել են կամենում. ինչ իրաւունքով ներկայ բանւորները պէտք է արգելեն անգործներին բանելու, քանի որ թէ ջուրը կայ, թէ յաճախորդներ ահագին քանակութեամբ և թէ ազատ գործող ձեռքեր։ Սակայն ոչ. ներկայ աշխատողները այսպէս են տրամաբանում. երբ բաղնիսները որոշ ժամերում բաց լինեն՝ յաճախորդների թիւը այնքան շատ կը լինի, որ բոլոր ժամանակ իրանք աշխատանքի կը լինեն և հետևապէս եկամուտը շատ...

Այսպիսով անգործ բանւորների շահերը պահանջում են բաղանիքները բանեցնել օր և գիշեր։

Այժմ քննենք, թէ որքան կորուստ ունի արդիւնաբերական-տնտեսական մասը։

Մեր համարեա բոլոր բաղնիսները այնպէս են կառուցված և յարմարեցված, որ ջրի համար մեծ ամբարներ չունեն այնքան, որ այժմ փակ եղած ժամանակը բղխած ջուրը հաւաքեն և հետևեալ օրը շահագործեն. և վերջապէս եթէ հաւաքելու էլ լինեն և լողաբանները այնքան սահմանափակ են, որ եթէ նոյնիսկ այդքան ջրերը որ հաւաքելու լինեն, անհնարին է այժմեան լողարաններում հետևեալ օրը գործածել, ուրեմն մնում է այնպէս վարվել, ինչպէս այժմ են վարվում՝ այսինքն ջուրը իզուր տեղը թողնել Դաբախանի գետակը թափվելու համար. այսպիսով բնականից մեզ պարգևված գանձը փոխանակ վայելելու՝ հանգիստ խղճով թողնում ենք որ իզուր փչանայ... Սա արդէն մեր կողմից կատարեալ ոճրագործութիւն է ժողովրդական տնտեսութեան դէմ... Սա արդէն միևնոյն է թէ Բագուի բանւորները հրաժարվեն գիշերները նաւթ քաշելուց. չէ՞ որ դա ամեն մարդ, երեխան անգամ կասէ, թէ խելագարութեան գագաթնակէտն է... հրաժարվել գետնից բղխող ոսկին հաւաքելուց...

Իսկ որքա՞ն է տուժում ժողովրդական առողջապահութիւնը ներկայ կարգերից։ Բանւորից սկսած մինչև գործակատարը, արհեստաւորը, վաճառականը սարսափելի նեղվում են այն դժուարութիւններից, որոնք կապված են այժմեան կարգերի հետ, և ստիպված են լողանալու թիւը սովորականից սակաւացնել. մինչդեռ առողջապահութիւնը պահանջում է մաքուր պահել մարմինը և յաճախ գնալ բաղնիս. այս իսկ տեսակէտից միանգամայն աւելորդ է նոյնիսկ կիրակի օրերը բաղնիսները կողպելը, որովհետև դա աշխատող դասի համար ամենայարմար օրն է լողանալու, մաքրվելու։

Այսպիսով թէ ազգաբնակութեան շահերի տեսակէտից, թէ անգործ բանւորների շահի տեսակէտից, թէ արդիւնաբերական-տնտեսական տեսակէտից և թէ ժողովրդի առողջապահական տեսակէտից՝ բաղնիքներում տիրող ներկայ կարգերը վնասակար են և պէտք է ենթարկել արմատական փոփոխութեան. կայ բնականից ձրիաբար տաքացրած և բուժիչ ջուր, կայ լողացող ահագին բազմութիւն, կայ անգործ բանւորների լէգիօն. ուրեմն ինչո՞ւ չը շահագործել այդ բոլոր ֆակտօրները և օր ու գիշեր չը բանեցնել բաղնիքները։

Մեր անկեղծ խորհուրդն է ներկայ աշխատող բանւորներին՝ հաւաքվել ի միասին այն կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ, որոնք սկիզբներում նրանց կազմակերպել և ներկայ կանօնները սահմանել են, վերաքննել սահմանված կարգերը և մշակել նոր կարգեր, ապա թէ ոչ կենդանի և եռացող կեանքը չի տանի իրան սեղմող շրջանակները և տաշեղի նման կը շպրտի այդպիսիներին իրանից հեռու, իբրև անպէտք և աննօրմալ երևոյթներ։

Շիրին

ԱՐՓԻԱՐԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

Ստացանք Բագուից 1) Մկրտիչ Մանուչարեանից՝ 10 ր., 2) Գարեգին Ենգիբարեանից՝ 5 ր., 3) Մարտին Շաթիրեանից՝ 5 ր., 4) Արտէմ Երեմեանից՝ 5 ր., գումարն է 25 ր., որով մինչև այժմ ստացել ենք 192 ր. («Մշակ» № 62)։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ *)

«Մշակի» № 151-ում կարդալով «Ներքնական խնդիր» առաջնորդողը կաթողիկոսական թեկնածուների մասին, վճռեցի իմ հայեացքներն էլ ընդգծել այդ խնդրի մասին։ Իմ կարծիքով՝ Խրիմեան Հայրիկից յետոյ եղող կաթողիկոսը պէտք է լինի ազդեցիկ, բարձր դիրքով մէկը. նախ այն պատճառով, որ Խրիմեանի նման մեծութեան վայել յաջորդ լինի, և երկրորդ ու գլխաւոր պատճառն այն է, որ միայն այդպիսին կարող է ենթարկել իր ազդեցութեան տասնեակ տարի դիսցիպլինայից դուրս ապրած մեր հոգևորականութեանը։ Բայց թէ որքան դժուար է առհասարակ դիսցիպլինայի ենթարկել հոգևորականութեանը, այդ շատ պարզ կը լինի մեզ համար, եթէ յիշենք Գէորգ կաթողիկոսի ունեցած ընդհարումը Սուքիաս Պարզեան եպիսկոպոսի հետ։ Եթէ միայն խիստ կարգապահութիւն գոյութիւն ունեցած ժամանակ Գէորգ կաթողիկոսի նման մի անձնաւորութեան համար այնքան դժուար էր հնազանդեցնել կաթողիկոսական իշխանութեան մի եպիսկոպոսի, կարելի է երևակայել, թէ ինչ դրութեան մէջ կը լինի վարդապետից վաղը կաթողիկոս դառնողը, թէկուզ նա վարչական հանճար լինի։ Դիրքը մեծ դեր է խաղում գոնէ մեր ժամանակները։ Միմիայն բարձր դիրքով հոգևորականը կարող է կապել իր հետ Պօլիսը, Սիսը և առհասարակ ժողովուրդը։

Գալով ընտրութեան, իմ կարծիքով, մենք պէտք է ամենից առաջ ի նկատի առնենք նրա անցեալ վարչական և դիպլօմատիական գործունէութիւնը։ Եթէ միայն կան փաստեր ապացուցող, որ ընտրելին ընդունակ դիպլօմատ ու վարչական մարդ է, այն ժամանակ միայն քննութեան առնել միւս կողմերը, որովհետև, որքան էլ բարձր մարդ լինի ընտրելին, եթէ նա զուրկ է այդ երկու յատկութիւնից, նա երբէք օգտաւէտ կաթողիկոս լինել չէ կարող. կը լինի միայն լաւ մարդ, բայց այդ շատ քիչ է կաթողիկոս լինելու համար։

Շատերի կարծիքով Օրմանեանը աւելի ժամանակակից, վարչական մարդ է համարվում, քան Իզմիրլեանը և Խապայեանը։ Եկեղեցու պետը պէտք է հասկանայ ժամանակի ոգին և ըստ այնմ յարմարվի նրան հարկաւոր չափով և ոչ աւելի։ Եթէ Օրմանեանը ունի վարչական հմտութիւն և, որ գլխաւորն է, ունի էներգիա բարեկարգելու թէ հոգևորականութիւնը, թէ եկեղեցին և թէ դպրոցները, այն ժամանակ նա իսկապէս ամենից յարմար պէտք է լինի։ Իբրև բարձր կրթութեան ու զարգացման տէր և փորձառու մարդ, նա ամենից շուտ կարող է ըմբռնել ժամանակի ոգին։

Պէտք է ըմբռնել ժամանակի ոգին, որպէսզի ըստ այնմ պատրաստվի վարչութեան սիստեմ և եկեղեցականութիւն։

Ս. Կոժեմիկեան

(Պրօխլադնի կայարան)

---

*) Մենք մեր կարծիքը յայտնել ենք արդէն այդ հարցի առթիվ։ Ծ. Խմբ.

ՄԻ ԿՈՉ ԳԻՒՂՈՒՋԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Սիրելի հայրենակիցներ. մեր ծննդավայր Գիւլլուջան, որ այնքան տարիներ մեզ իր ծոցումն է օրօրել, պահել-մեծացրել, այժմ տառապում է մի քանի բաղդախնդիր գրագիրների, բախկալչիների ճիրաններում։ Գիւլլուջան, շնորհիւ այդ վաշխառուների, տնտեսապէս քայքայվել, բարոյապէս ընկել է և այժմ իր բնակիչների համարեա թէ $^{3}/_{4}$ մասը ոտքը դրել է սովի անողոք շեմքում։

Խեղճ գիւլլուջեցին ո՞ւր գնայ, ո՞րից օգնութիւն խնդրէ։

Արդեօք Երուանդի՞ց, որը բոլոր վաշխառուների ուսուցիչն է. այո, նա է այժմեան գիւղական դպրոցների ուսուցիչը. նա էր, որ սօմար սօմարով տալ և գարու փոխարէն ցորեն վերցնել մտցրեց մեր միամիտ և աստուածավախ գիւղացիների մէջ. և այդ գիւղացու տուն քանդող շահագործող սիստեմին են դիմել նաև նորահաս վաշխառուները։

Թէ՛, Աւագներին, Թադէոսներին ու Ենօքներին դիմեն, որոնց հէնց սկզբնական ծագումը վաշխառուների ընտանիքից է, նոյն հոգով և սնվել ու մեծացել են և վերջին ժամանակներս էլ պ. Երուանդի մօտ վաշխառուական կուրսը վերջացրել ու զանազան գիւղաքաղաքներում կատարելագործվել, այժմ դարձել են գիւղացիների համար նոյնքան արիւնարբու, նոյնքան սոսկալի՝ որքան Երուանդը։ Մի քանի արշին փտած ճոթու կտոր կամ լուցկի, նաւթ ու ուրիշ մթերքներ գիւղացիներին տալով նրանք անվախ կերպով և հեշտութեամբ կարողանում են խլել նրանցից ամբողջ տարվայ պարէնը ու նրանց թողնում անտանելի դրութեան մէջ։ Այո, ասում եմ անվախ, որովհետև ոչ ոքից նրանք այժմ չեն վախենում. հաւաքվելով մի տեղ, մի կուսակցութիւն կազմելով, գիւղի տէրն ու տիրականն են դառել։

Նրանք գիտեն, որ գիւղի երիտասարդութիւնը չէ հետաքրքրվում իր ծննդավայրի ներկայ վիճակով, տեսնում են, որ երիտասարդութիւնը միայն հանդիսատես է լինում այդ կատարվող ցինիկ ակտերին, և նրանք մեր անտարբերութիւնը դէպի մեր հայրենի գիւղը տեսնելով համարձակ՝ նորից լայնացնում են իրանց սպեցիֆիկ ասպարէզը։ Նրանք, այդ գիւղացու արիւն ծծողները, քաջ գիտեն, որ խաւարի մէջ խարխափող այժմեան գիւղացիութիւնը չէ ճանաչում իրանց, չէ տեսնում, չէ զգում թէ իր տունը քանդողը հէնց այդ Երուանդներն ու Թադէոսներն են, և նրանք այս էլ գիտեն, որ եթէ ի դէպս գիւղացին արթնանայ իր կորստաբեր քնից, իր շահերը պաշտպանի, և նրանց իր միջից հեռացնի, դա լինելու է երիտասարդութեան միակ բանիմաց նոր սերնդի միջոցով։ Նրանք զգում նախապէս, որ եթէ իրանց կեղծ յեղափոխական դիմակը յետ քաշվի և իրանց իսկական գոյնը, պատկերը ցոյց տրվի գիւղացուն, իրանց պրեստիժը վայր գցվի բոլոր գիտակից հասարակութեան մէջ,—դա կատարվելու է այժմեան երիտասարդութեան ձեռքով։ Բայց դժբաղդաբար երիտասարդութիւնը օտար քաղաքներում, գաւառներում ապրելով, չը գիտեմ թէ ինչու թողնում է իր հարազատներին այդ արիւնարբուների ճանկերում։

Արդ, ժամանակն է, պարոններ, որ մտածենք մեր գիւղի մասին, հաւաքվենք և մեր սեփական ոյժերով տապալենք այդ վաշխառուների լպիրշ ռէժիմը. մենք ինքներս լանք մեր ցաւ ու դարդը, փոխանակ զանազան անցորդ բագրեանդցիների, որոնք մի քանի օր ապրելով գիւղում չեն կարող ճանաչել գիւղացու իսկական թշնամիներին։

Սեմիկ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դուշակ (Անդրկ. երկ.), 14 մարտի

Թիւրք-պարսկական սահմանային միջադէպից յետոյ, ներկայումս Անդրկասպեան երկրում օրըստօրէ աւելանում են աւազակութեան դէպքերը ռուս-պարսկական սահմանի ուղղութեամբ։

Արտիկ կոչված կայարանի ուղղութեամբ՝ մի խումբ թիւրքմէն աւազակներ յարձակվել են սահմանակից պարսկական մի գիւղի վրա և առևանգել են եօթ կնոջ, որոնց թւում եղել են և օրիորդներ։ Առևանգման միջոցին աւազակներն սպանել են մէկին և մի ուրիշին էլ վիրաւորել։

Իսկ 100—500 գլուխներով ուղտ ու ոչխար քշելը ներկայումս սովորական երևոյթ է դարձել մեր կեանքում։

Ոչ պարսիկներն են կարողանում սահմանից ազատօրէն անցնել ռուսական հողը և ոչ թիւրքմէնները՝ պարսից հողը, որովհետև թիւրքմէններն ու պարսիկները չափազանց սուր կերպով լարվել են իրար դէմ։ Կառավարութիւնը մատների արանքով է նայում երկու դրացի ժողովուրդների միջև տիրող այդ գժտութեան վրա։

Պարսիկներն էլ, իրանց կարգին, Սերախսի կողմերում, թիւրքմէնների բաւականաչափ ոչխարներն ու ուղտերն են քշել և լուր ուղարկել թիւրքմէններին, որ մինչև սրանք իրանց գերած կանանցն և ուղտերին ու ոչխարներին չը վերադարձնեն, պարսիկներն էլ չեն բաց թողնի նրանցից գրաւած կենդանիները։

Հէնց հիմա լուր բերին, թէ թիւրքմէնները մի խումբ պարսիկներից դարձեալ 3—400 գլուխ ոչխարներ են քշել՝ խաշնարածներին կապոտելով։

Խ.

—

Հին-Նախիջևան, 11 մարտի

Ամսիս 9-ի գիշերը Հին-Նախիջևանի բանտից փախել են 10 տարով տաժանակիր աշխատանքի դատապարտված գէչլուեցի Թէմիրը իր 5 ընկերներով։ Ոստիկաններին աջողվել է միմիայն նրանցից մէկին բռնել։ 5-ը արդէն անյայտացել են։ Գաւառապետը նրանց փնտռելու է գնացել։ Բայց դժուար թէ ձեռք ընկնեն։ Պէտք է ասել, որ փախչողները բոլորն էլ գաւառիս ամենակատաղի և ճարպիկ աւազակներիցն են եղել։ Սա այն Թէմիրն է, որ բռնաբարեց շուռութեցի հարսին և կտոր-կտոր արեց թէ նրա ամուսնուն, թէ նրան և թէ միւս ուղեկիցներին։ Թէմիրը սրանից միայն մի քանի օր առաջ էր տաժանակիր աշխատանքի դատապարտվել, ուր մասին արդէն հաղորդել էր «Մշակին»։

Ա. Գ.

—

Ալէքսանդրօպօլ, 15 մարտի

«Մշակի» վերջին համարներում գրված Տօտօմեանի դասախօսութիւնները «կօօպերատիվ ընկերութիւնների մասին», մեզանում իր զօրեղ ազդեցութիւնը արեց։ Տեղիս ինտելիգենցիան իր սրտին մօտիկ համարելով կօօպերացիան, միւս կողմից ի նկատի առնելով մօտիկ ազգաբնակութեան ծայրայեղ չքաւոր կացութիւնը, ամսիս 13-ին անմիջապէս ժողովի հաւաքվելով մօտ 15 հոգի, ընտրել է ժամանակաւոր մասնախումբ վեց հոգուց, որը պիտի ցուցակագրէ ընկերութեան մասնակցել ցանկացողների անունները և, ուսումնասիրելով նոյն ընկերութեան վերաբերեալ գրուածքներ, կազմէ տեղական պայմաններին յարմարեցված կանօնադրութիւն և առաջարկէ յետագայում կայանալիք ընդհ. ժողովին, ապա ի հաստատութիւն ուր հարկն է։ Մասնախմբի անդամներ ընտրվել են պ. պ. Մկրտիչ Տարախչեան, Ս. Թարաշեան, Մ. Սարգսեան, Ս. Մելքոնեան, Վ. Բաբայեան և Հ. Ամատունի։ Երկու օրում՝ մասնակցել ցանկացողների թիւը հասաւ 100 հոգու. դեռևս չափազանց շատ ցանկացողներ էլ կան։ Ընկերութիւնը տրամադիր է առայժմ փոքր փայերով բաց անել հացատուն. ի նկատի ունի ապագայում բանալու և մսի խանութ։ Շնորհաւորութեան արժանի է սկսված գործը. ի սրտէ աջողութիւն ցանկանալով, խորհուրդ կը տայինք յարգ. պարոններին, առանց շտապելու, կանօնաւոր և հաստատուն հիմքի վրա դնել ընկերութիւնը, ապա գործնականի դիմել, որովհետև անաջողութեան դէպքում անպատրաստ մասսան միանգամայն կը հիասթափվի, որից յետոյ ընդմիշտ կարող է մեռնել մեզանում այդ համակրելի գործը, իսկ աջողութեան դէպքում մենք հաստատ համոզված ենք, որ այդօրինակ ընկերութիւններ բազմաթիւ կը լինեն, որը և չափազանց ցանկալի է։

Դիտող

Շուշի, 17 մարտի

Մեր կօնսիստօրիայի գանձարկղը յափշտակողները այնքան բարի՝ ով գիտէ գուցէ և վախկոտ գտնվեցին, որ կանխիկ փողերը վերցնելով, տոկոսաբեր բոնտաները վերադարձնելով, հետևեալ գրութեամբ. «Մենք դարձրին փողերը բաժանել ենք մեր մէջ և արդէն արել: Ինչ վերաբերում է բոնտաներին, նրանք դրված են Կուսանաց վանքի բակում: Խնդրում ենք անմիջապէս մարդ ուղարկէք վերցնելու, որպէսզի անձրևը չը փչացնէ»: Գնացին վերցրին լրիւ:

Երէկ, ամսիս 16-ին, կիրակի, տեղի ունեցաւ կովկասի հայոց բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վերաբացման առիթով երկրորդ ընդհանուր ժողովը: Առաջինը կայացել էր մի շաբաթ առաջ: Այս անգամ բազմամարդ էր ժողովը: Արդէն 54 անդամ են գրված և փողերը կանխիկ վճարած, 5-ական րուբլի տարեկան: Ներկայ էին 36 իսկական անդամներ: Նախագահ ընտրվեց և ժողովը բացեց լիազօր ինժեներ Մ. Ղոնդաղսազեան: Համառօտակի նա ծանօթացրեց ժողովականներին բարեգործական ընկ. տեղական ճիւղի պատմութեան հետ, սկսած 1883 թ. մինչև մեր օրերը: Ներկայումս ճիւղը կարող է ունենալ իր տրամադրութեան տակ 3000 ր. չափ փող, նախկին ճիւղից մնացած ժառանգութիւն, որը պահ է տրված պետական բանկում, և մի հարուստ գրադարան:

Ժողովը զբաղվեց վարչութեան անդամների, փոխանդամների և վերստուգող յանձն. անդամների ընտրութեամբ:

Ձայների մեծամասնութեամբ ընտրվեցին վարչութեան 5 անդամ, 2 փոխանդամ և 3 վերստուգող անդամներ:

Ցանկանք, որ վերաբացվող ճիւղը յաջող լինի և իր նախորդի նման արդիւնաւոր:

G.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մարտի 25-ին, Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովի յոբելեանի օրը, Թիֆլիսի արքունական թատրօնում տեղի կունենայ «զինւորականների պաշտօնական համերգ»: Համերգը բաղկացած է լինելու 3 բաժիններից. 1-ին բաժնում նուագելու է 250 հոգուց բաղկացած զինւորական երաժշտութիւնը, 2-րդ բաժնում՝ երաժշտական դիվերտիսմենտ զինւորական կեանքից քաղէտով. մասնակցելու են բացառապէս օֆիցէրները իրանց ընտանիքներով. 3-րդ բաժնում՝ կենդանի պատկերներ ժողովրդական կեանքից, ազգային պարեր: Վերջում ահագին ապօթէօզ: Մասնաւոր հասարակութեան համար տոմսակների թիւը սահմանափակ է: Կոմսուհի Վօրօնցովա-Դաշկովան խոստացել է երեկոյթի տիրուհին լինել:

◆ Կարմիր Խաչի ռուսական ընկերութեան տեղական շրջանային վարչութիւնը իր վերջին նիստում որոշեց մի յատուկ պատգամաւորութիւն կազմել՝ Կովկասի Փոխարքայի օֆիցէրական ծառայութեան 50-ամեայ յոբելեանը շնորհաւորելու համար:

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Րուդոլֆը Պետերբուրգից վերադարձաւ Թիֆլիս:

◆ «Зак.»-ին հեռագրում են. «Մարտի 18-ին Մոսկվայից Կովկաս մեկնեց Մոսկվայի հասարակութեան ներկայացուցիչը Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովի յոբելեանին մասնակցելու համար»:

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան վերջին նիստում որոշվեց Փոխարքայի յոբելեանին մասնակցել մի յատուկ պատգամաւորութեան միջոցով: Որոշվեց պատգամաւորութեան համար հրաւիրել նաև ընկերութեան պատւաւոր անդամ Ցինամզգվարովին:

◆ Գաղանութեան մի զոհ ևս: Մարտի 18-ին Թիֆլիսում, «Գուտտենբերգ» գրախանութի տէր Գալուստ Գալստեանը երեկոյեան ժամը 10-ի մօտերը վերադառնում էր Լէօի մօտից իր տուն, կնոջ հետ միասին: Անցնելով Սօլօմօնովսկի փողոցով, երկուսն էլ շրջում են Արմեանսկի փողոցը և, երբ դիմում էին դէպի Երևանեան հրապարակը, № 6 տան մօտ, Աղէլխանեանի խանութի առաջ յանկարծ չորս չարագործներ շրջապատում են նրանց: Կինը բնազդմամբ վատ բան նախազգուշակելով՝ նկատում է ամուսնուն. «Գալուստ, գնանք շտապով»: Սակայն հէնց այդ րոպէին լսվում է չարագործների ատրճանակի ձայնը և Գալստեանը ընկնում է արիւնլուայ: Գնդակը կպել է նրա երեսին ունքի տակից և, քթի միջով անցնելով, դուրս է եկել աջ ականջի մօտից: Կրակոցի և կնոջ յուսակտուր ձայներին օգնութեան են վազում մարդիկ. գալիս են նաև քաղաքապահ ոստիկանները: Չարագործները արդէն փախչում-անյայտանում են: Անմիջապէս վիրաւորված Գալստեանին կառք են դնում և տանում են Միքայէլեան հիւանդանոց: Հիւանդանոցում բժիշկներին աջողվեց կտրել արիւնի հոսանքը, որ շարունակվում էր վիրաւորվելու րոպէից: Բժիշկների վկայութեամբ, թէև վէրքը ծանր է, բայց կեանքին վտանգ չէ սպառնում: Գալստեանը մարտի 8-ին մի սպառնական նամակ էր ստացել, որով գնդակ ոճով մահվան սպառնալիքի տակ պահանջվում էր նրանից 500 րուբլի: Գալստեանը այդ նամակի մասին ոչ ոքի չէր յայտնել: Երէկվանից վիրաւորվածի դրութիւնը լաւացաւ: Այս դէպքը բոլորովին չը խանգարեց գրախանութի գործունէութեան: Նա այժմ էլ բաց է և շարունակում է իր առևտուրը: Ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել չարագործներին գտնելու: Սպառնական նամակից երևում է, որ գրողները Թիւրքահայեր են:

◆ Թիֆլիսի արքունական թատրօնում այսօր՝ մարտի 20-ին և շաբաթ՝ մարտի 22-ին տեղի կունենան Ալէքսէյ Լիսօվսկու վերջին երկու դասախօսութիւնները. առաջին դասախօսութիւն՝ «Հիասթափութեան դարեգլուխը և նախաբան», բաղկացած 3 մասերից. երկրորդ դասախօսութիւն՝ «Վերածնութիւն», բաղկացած կրկին 3 մասերից:

◆ Ստացանք «Աղբիւր» ամսագրի փետրվարի համարը, այս անգամ աւելի մեծ դիրքով: Համարը կազմված է շքեղ, գեղեցիկ և հետաքրքրաշարժ մանկական ընթերցանութեան համար: Ցաւալի է, որ «Աղբիւրը», իբրև մանկական պատկերազարդ հանդէս, տարածումն չէ գտնում հայ հասարակութեան մէջ և խմբագիր-հրատարակիչը ստիպված է նիւթական զրկանքներ կրել, տպագրելով մի ամսագիր, որ, չը նայելով իր օգտակարութեան, տարածումն չէ գտնում:

◆ Այսօր, ժողովրդական զուարճութիւնների ընկերութեան դահլիճում (Օլգինսկայա փողոց, 44), երեկոյեան ժամը 5-ին, բացվելու է էժանագին գրադարան հասարակութեան համար: Գրադարանը բաց է լինելու երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը 5—8, իսկ կիրակի և տօն օրերը՝ ցերեկվայ ժամը 11—1: Վճարը ամսական 15 կ. և գրաւական 1 ր.:

◆ Մոսկվայի սպանդանոցի կառավարիչ Պօդբերնիան Թիֆլիսի քաղաքային վարչութեանն ուղարկել է իր եզրակացութիւնը Թիֆլիսում կատարելագործված սպանդանոց շինելու մասին: Պօդբերնիային ուղարկված էին Սակսագանսկի և Օհանջանեան տեխնիկների կազմած նախագծերը: Պօդբերնիան, իբրև մասնագէտ այդ գործում, առաւելութիւն է տալիս Օհանջանեանի նախագծին և խոստանում է Թիֆլիս գալ՝ այդ նախագիծը մանրամասն քննութեան ենթարկելու համար քաղաքային վարչութեան, քաղաքային տեխնիկների և մսագործների ներկայացուցիչների հետ:

◆ Այսպէս անուանված «Ծննդկանների Արէշեան կասսային» մասնակցողները հիմնադիրներից պահանջել են տալ կասսայի մանրամասն հաշիւները: Կասսայի հիմնադիր Արէշովը փող չունենալու պատճառով համաձայնում է 20,000 րուբլու պարտամուրհակներ տալ...:

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստի շարունակութիւնը նշանակված է այսօր:

◆ Վաղը, մարտի 21-ին, արտիստական ընկերութեան դահլիճում, վարժուհիների ընկերութեան միջոցները շատացնելու համար, բժ. Թաթիշեանը մի դասախօսութիւն կը կարդայ «Մեր օրերի հիւանդոտ երեւոյթները հասարակական տրամադրութեան մէջ» թեմայով: Սկիզբն է երեկ. ժամը 7-ին:

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչը տեղեկութիւն է ստացել երկաթուղային գլխաւոր վարչութիւնից, որ 1906 թ. երկաթուղիներից ստացված օգուտից 145 հազար րուբլի բաժանվելու է ծառայողներին: Այս գումարից 80 %-ը, այսինքն 116,000 րուբ. բաժին է ընկնելու ստորին ծառայողներին: Անցեալ տարի նոյն նպատակով բաց էր թողնված 105,000 ր.:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը առաջարկեց էլեքտրաքարշի ընկերութեան՝ երեք օրում ուղղել էլեքտրաքարշի ուղղութեամբ ընկած սալայատակները, որոնք փչացած են 18 տեղերում:

◆ Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան վարչութեան նախագահ ընտրվել է Եա. Գուլաձէ, գանձապահ՝ Ա. Կիպշիձէ, իսկ քարտուղար՝ Պիրցխալավա:

◆ Պետերբուրգից ստացված տեղեկութիւնների համաձայն, այնտեղ մի յատուկ յանձնաժողով է կազմվել, որին պաշտօն է տրված քննել այն հարցը՝ թէ կարելի՞ է, արդեօք, Կովկասի վրա ևս տարածել այն արտօնութիւնները, որոնց համաձայն զօրամասերը և զինւորական վարչութիւններից մի քանիսը ձրիաբար ջուր են ստանում քաղաքային ջրանցքներից և ջրամբարներից:

◆ Գօրի քաղաքից Թիֆլիս է բերված Գօրու պրօգիմնազիայի աշակերտ Նակիդաշվիլին, 17 տարեկան, որ զինւորական-նահանգական դատարանին է յանձնված այդ պրօգիմնազիայի տեսչի կեանքի դէմ մահափորձ կատարելուն համար:

◆ Մարտի 13-ին, երեկոյեան ժամը 9-ին, Սղնախի և Կաչրեթի միջև ընկած խճուղու վրա չորս անյայտ չարագործներ կանգնեցնում են 4 հանրակառքերի և նստողներից պահանջում են յանձնել փողերը: Ժողոված տեղեկութիւնների համաձայն, կողոպտվել են հետևեալները՝ Վասիլի Զօչիէվ, Ալեքսանդր Զուրաէվ, Իլիա Զիկաէվ, Կօմֆա Զիկաէվա, Գէորգ Բայրամով, Միքայէլ Օսիպով, Իվան Դաւթեան Բաշինջաղեանց, Ստեփան Ակուլով և Ալէքսանդր Տուչուրեան: Կողոպտիչները տարել են 200 ր. չափ զանազան իրեր:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 18-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Բեթղեհէմի փողոցում, երկու անյայտ զինված մարդիկ մտնում են Մարիամ Ջամիզովի բնակարանը և մահվան սպառնալիքով վերցնում են 400 րուբլի կանխիկ փող և 400 րուբլու էլ զանազան արծաթէ իրեր, որից յետոյ դուրս գալով անյայտանում են:

◆ Մարտի 18-ին, ցերեկվայ ժամը $4^1/_2$-ին Գանօվսկի փողոցում, Մանթաշեանի տանը, Թիֆլիսեցի վաճառական Եկատերինա Ծովեանովի բնակարանում, վառարանը վառելու ժամանակ, հրդեհ է ծագում: Կրակը հանգցնում են հրդեհաշէջների խմբի օգնութեամբ: Վնասները քիչ են:

◆ Մարտի 18-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Պեսկօվսկի փողոցում, 83-րդ տան մօտ մի քանի հոգի իրար մէջ կռիւ են սկսում: Մէջ է ընկնում Թիֆլիսեցի Իվան Միրվելովը բաժանելու համար, սակայն ինչ-որ մէկը խեկից դանակով վիրաւորում է նրան: Վիրաւորվածին տանում են Միքայէլեան հիւանդանոցը: Վէրքը ծանր չէ:

◆ Մարտի 18-ին Միքայէլեան փողոցում, № 65 տանը լուսանկարչատուն ունեցող Այվազ Այվազեանի մօտ են մտնում երկու հոգի և փող են պահանջում. սրանք դեռ երկու ամսից առաջ մի սպառնական նամակ էին ուղարկել փողի պահանջով: Երբ Այվազեանը առաջարկում է նրանց յայտնել իրանց ընկերների անունները, նրանք յարձակվում են նրա վրա և կամենում են քաշելով տանել նախասենեակը: Այդ ժամանակ Այվազեանը հանում է բրաունինգ ատրճանակը և կրակում է չորս անգամ: Չարագործներից մէկը մահացու վիրաւորված ընկնում է 63-րդ տան մօտ և հոգին աւանդում է, իսկ միւսը թեթև վիրաւորված փախչելով անյայտանում է: Սպանվածի ազգանունն է Գէօրգի Կօցաձէ, 18 տարեկան, Քութայիսի նահանգի բնակիչ:

◆ Մարտի 18 ին, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի Մետեխի բանտի վերին յարկի արտաքնոցում գտել են Կազիմիր Գարլիցկաւին սպանված: Առ այժմ մարդասպանների ով լինելը պարզված չէ:

ԼՈՒՐԵՐ ԳԱՆՁԱԿԻՑ

◆ Մարտի 17-ի լոյս 18-ի գիշերը գողերը մտել են Բալաջա Բարխուդարեանի բակը՝ հնդկահաւ գողանալու համար. Բալաջանը տնից դուրս է եկել և կամեցել է արգելք լինել գողերին, բայց վերջինները դաշոյնով մորթել են Բարխուդարեանին:

◆ Քանի օր է՝ եղանակը սաստիկ ցրտել է և ձիւնախառն անձրև է գալիս:

◆ Գանձակի շրջակայ գիւղերում անասունի կերի սաստիկ պակասութիւն է զգացվում: Գիւղացիներն առհասարակ սովորութիւն ունեն ամառվայ ընթացքում իրանց անասունի կերն էժան գնով ծախելու, իսկ ձմեռը զղջում են, բայց արդէն ուշ է լինում:

◆ Քաղաքիս խանութներից մէկում ցուցադրված է մի հորթի երկ-գլուխ: Հորթի այդ երկու գլուխը ոչ մի պակասութիւն չունեն: Կովատէրը երբ նկատում է, որ իր կովը երկգլխանի մի հորթ ծնեց, անմիջապէս թէ կովի և թէ հորթի վզները կտրում է, վախենալով որ «հրէշ-հորթը» կամ «հրէշածին» կովը իրանց կուլ կը տայ:

◆ Վերջերս մի երեկոյ Գանձակի ոստիկանական ստորին պաշտօնեայ Լ. Ղուկասեանը մտնում է քաղաքի բնակիչ Յովսէփ Յովսէփեանի տունը և շտապ կերպով առաջարկում է ստորագրել «իրանց փողոցից սրիկաներին դուրս անելու համար կազմված խնդիրքին»: Յովսէփեանը, զբաղված լինելով իր հիւանդ երեխային խնամելու խնդրով, առանց ուշադրութիւն դարձնելու խնդիրքին, հաւատում է քաղաքապահ ոստիկանին և, առանց նախապէս կարդալու, ստորագրելով թուղթը՝ վերադարձնում է նրան: Հետևեալ օրը Յովսէփեանը թաղական պրիստաւից իմանում է, որ նման համախօսական երբեք չէ յանձնվել քաղաքապահ Ղուկասեանին՝ ստորագրել տալու համար քաղաքացիներին: Սկսվում է խիստ քննութիւն, որից երևում է, որ քաղաքապահն Յովսէփեանին ստորագրել է տուել Պաւէլ Ղարիբեանի անունով մի ստացական, 300 ր. գումարի, որպիսի գումարը Ղարիբեանը պարտ է եղել Յովսէփեանին: Յովսէփեանն այս մասին գանգատվեց նահանգապետ Կովալեովին և վերջինս հրամայեց հեռացնել քաղաքապահ Ղուկասեանին իր պաշտօնից: Գործի քննութիւնը ներկայումս գտնվում է դատաստանական իշխանութեան ձեռքին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Թագաւոր Կայսրը, ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցման համաձայն, մարտ ամսի 1-ին ամենաողորմածաբար բարեհաճել է թոյլատրել ընդհանուր հանգանակութիւն սկսելու յայտնի հայ նկարիչ Ի. Կ. Այվազովսկու համար մահարձան կանգնեցնելու Թէոդոսիա քաղաքում:

◆ Մարտի 10-ին Տաւրիկեան պալատի մօտերքում, Կիրօչնայա և Պարադնայա փողոցների անկիւնում, ցերեկվայ ժամը 12-ին, պայթում է սալայատակի վրա անյայտ անձի ձեռքով դրված պայթուցիկ նիւթը: Պայթիւնից փասվել է զինւոր Ստանչելեվսկի, վէրք ստանալով գլխից, աջ ոտքի կրունկից և աջ աչքից: Վիրաւորված զինւորի ասելով, նա անցնում էր Պարադնայա փողոցով և պատահաբար նկատելով երեք քայլ հեռու սալայատակի վրա ընկած թղթէ փաթեթը, ոտքով հրում է նրան: Դրանից անմիջապէս պայթիւն է առաջանում, որից և ինքը վիրաւորվելով, ուշաթափվում է: («Р. Сл.»)

◆ Պետական Դումայի անդամ Պերգամենտը մի անանուն նամակ է ստացել Օդեսայից, որ քաղաքապետ Տօլմաչովի կեանքի դէմ մահափորձ կատարվելու դէպքում կը սպանվի թէ ինքը և թէ պատգամաւոր Շչեպկինը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, 14 մարտի

«Վտակի» № 41-ում, «Կայծակ» ստորագրութեան տակ ծածկված մի անձ գրականական ասպարէզ է մտել և ժողային հետևելով գործակատարների շահերն է պաշտպանում: Թէ գործակատարներն էլ մարդ են, մարդավարի ապրել կուզեն, նրանց էլ հանգստութիւն է հարկաւոր, նրանց հետ էլ բարեխղճաբար պէտք է վարվել,—այդ մասին ոչ ոք իրաւունք չունի հակառակ կարծիք յայտնելու: Բայց ինչ վերաբերում է «վերջերս գործակատար ընկերներից մէկի ոտքը բժշկական որոշմամբ կտրեցին, որովհետև չարաչար աշխատելուց եւ սնունդի պակասութեան պատճառով անբուժելի հիւանդութիւն էր ստացել» բառերին,—դա ապացուցանում է Կայծակի խորին տգիտութիւնը և աններելի անխղճութիւնը: Եթէ սնունդի պակասութեան և չարաչար աշխատութեան պատճառով մարդիկ անբուժելի հիւանդութիւն ստանային և ոտքերը կտրել տային, շատ վաղուց ես ու Կայծակը զրկված պիտի լինէինք մեր երկու ոտքերից: Նոյնիսկ մեր թշուառ գիւղացիներից շատերը, այդ չարքաշ կեանքի գիշեր-ցերեկ եգիպտական չարչարանքների մէջ տանջվող և լոկ ցամաք գարի հացով կերակրվող մշակները վաղուց մի ոտանի պիտի լինէին: Ինքն այդ ոտը կտրած անբաղդացած գործակատարն էլ կը վկայէ, որ Կայծակի գրածը յիմարութեան արդիւնք է, որ ինքը խանութի մէջ երբէք սոված չէ մնացել և կերել է այն, ինչ որ կերել է իր խաղէյինը, առանց տարբերութեան: Իսկ աշխատանք, այն էլ չարաչար աշխատանք բոլորովին չէ եղել: Մուշտարին ներս մտաւ. գործակատարը ապրանքը կապում, յանձնում է մուշտարուն.նա գնաց, ինքն էլ նստում իր տեղը մինչև մի ուրիշը մտնի: Փառք Աստուծոյ, առևտուրի քեասատութիւնն էլ այն աստիճանի է հասել, որ գործակատարները օրվայ մեծ մասը խաղէյինների հետ ճանճ են համարում: Այս աններելի ճշմարտութիւնը ամենքին յայտնի է. բայց Կայծակի պէս թուղթ մրոտողները կէրքը ամեն ճշմարտութիւնից բարձր են գնահատում, իրանց գծում հաշիւների պատճառով թէ լրագրի վարկն են կոտրում և թէ անխղճաբար ուրիշների պատւի հետ են խաղում:

Սրա հետ ուղարկում եմ բժիշկների տուած պաշտօնական վկայականի հարազատ պատճէնը, որից պարզ երևում է, որ Արշակ Աւետիսեանի ոտը կտրելու պատճառը չարաչար աշխատանքի և վատ սնունդի պատճառով չէ եղել *):

Կարսեցի

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերութեան

Ալէքսանդրօպոլ, 16 մարտի

Հրապարակով դիմում եմ հայոց դրամատիկական ընկերութեան և խնդրում բացատրել, թէ ինչ հիման վրա առաջին անգամ ներկայացնում է իմ «Տիգրանուհին», առանց վաղօրօք խնդրելու հեղինակի համաձայնութիւնը, գոնէ տեղեկացնելու նրան ներկայացման մասին: Գուցէ ես փոփոխութիւն պիտի մտցնէի պիէսի մէջ, որ իմ անդրանիկ դրամատիկական փորձն է և գրված մօտ 20 տարի առաջ. գուցէ ես կամենայի անձամբ ներկայ լինել ներկայացմանը, գուցէ ես իմ պայմանները պէտի առաջարկէի: Դրամատիկական ընկերութեան այս վարմունքի մէջ ես տեսնում եմ հեղինակի իրաւունքների խախտում և արհամարհանք դէպի հեղինակը: Մանաւանդ տարօրինակ և անհասկանալի է ընկերութեան վարմունքը այն պատճառով, որ նա իր գոյութեան առաջին տարվանից սկսած մինչև այժմ իմ ժամանակակից կեանքից գրված պիէսաներից («Թաշեան», «Բօշայեան» և «Վերածնված») ոչ մէկը չէ արժանացրել իր ուշադրութեան, չը նայած որ նրանք աւելի մշակված են, քան «Տիգրանուհին», և յամենայն դէպս ոչ աւելի վատ, քան բոլոր ինքնուրոյն պիէսաները, որոնք երևացել են վերջին տարիներում:

Դրամատիկական ընկերութիւնը լաւ օրինակ է տալիս հայ հասարակութեան և լաւ խրախուսանք հայ հեղինակներին:

Լևոն Մանուէլեան

ՄԱՄՈՒԼ

«Երկրի Ձայնը» շաբաթաթերթը իր վերջին համարում (№ 9) յայտնում է, որ ստիպված է վերածվել երկշաբաթաթերթի, գոնէ ժամանակաւորապէս, նիւթական միջոցների սղութեան պատճառով, որովհետև խմբագրութիւնը իր երկամեայ գոյութեան ընթացքում, չը նայելով իր կրած զոհաբերութիւններին, ձրի աշխատութեան, շարունակ ունեցել է դեֆիցիտ:

Անկասկած, ցաւալի է, որ մի թերթ, ինչ և լինէր նրա ուղղութիւնը, նոյնիսկ վիճելի մեր տեսակէտով (հայոց հարցի վերաբերմամբ), բայց կռւում էր կեանքի մէջ որոշ համոզմունքով, շիտակ և ուղիղ ճանապարհով, չը յենվելով միլիտարական հեղինակութեան վրա, չունենալով միլիտար տարածողներ, ստիպված է նիւթական սղութեան պատճառով կրճատել իր հրատարակութիւնը: Այն ուղղութիւնը, որի քարոզիչն է հանդիսանում «Երկրի Ձայնը», ի հարկէ, ընդունելի չէ հայութեան ողջամիտ մասին, բայց որովհետև գաղափարական ուղղութիւն է, համոզմունք է, ուստի մենք գործ ունէինք նրա հետ իբրև գաղափարական հակառակորդի հետ, հետևաբար և նրա կրճատումը կամ դադարումը գտնում ենք ցաւալի:

*

Նոյն շաբաթաթերթի մէջ Թիւրքահայ համակրելի դէմքերից մէկը, պ. Լ. Բաշալեան, ողբացեալ Արփիարի մտերիմ բարեկամներից և ջերմ երկրպագուներից մէկը, ամենայն իրաւամբ, իր վրդովմունքն է յայտնում, որ Արփիարի պէս նշանաւոր հայ գրողի և հրապարակախօսի սպանութեան վերաբերմամբ մեր կովկասահայ յայտնի գրողները յանցաւոր անտարբերութիւն ցոյց տուին.

Ու լռելեայն կուլամ եղբայրն ու բարեկամը, որուն կորուստը ալ ոչ մէկ բան կարող է փոխարինել ինծի համար:

Դուք որ պայքարին մէջն էք ու պատնէշին վրայ, անարգութեան զբոսմովը խարանեցէք այն հրէշները, որոնք այս եղեռնը կրցան յղանալ ու գործադրել, որոնք նուիրական կրակը մարող սատուածասպաններու, խորանին լոյսը գողցող սրբապիղծներու զզուելի արարքը վերանորոգեցին: Ու ինծի հետ ողբացէք այն հաշուուած ու դիտումնաւոր անտարբերութիւնը, որով այս եղեռնը ընդունուեցաւ Կովկասի հասարակութեան մէկ մասէն: Թէ իրենց օրական հացին մամլոյ տուքովը կաշկանդուած գրչակներ, ամեն տեսակ սողումներով ու դիւրաթեքութիւններով իրենք-զիրենք մէկ մէկ անկիւն տեղաւորած մարդիկ Արփիարը անգիտանալու ձև մը առնեն, ասիկա իս անտարբեր կը թողու: Երբեք թուխը չեմ սպասեր իրենց լործունքին մէջ պարփակուած խիղճերէ: Բայց որքան մեծ է իմ ցաւս, երբ ամեն յարգանքի ու հիացումի արժանի գրագէտ մը, ինչպէս Ահարոնեան, որ կարող էր իր հեղինակաւոր խօսքը պարտադրել ուրիշներուն, պարտք կը համարի լուռ մնալ այս ոճրին հանդէպ ու անտարբեր անցնիլ այս դիակին առջևէն: Այնպիսի բարքեր են ասոնք, որոնք գոնէ իմ հասկացողութենէս դուրս կը մնան:

Մենք «Մշակի» մէջ առաջինը եղանք, որ ընդգծեցինք մեր հայ գրողների այդ անբացատրելի լռութիւնը: Սպանվում է գրչի զինւորը, հրապարակախօսը, մատենագիրը, վիպասանը, և այն գրողները, վիպասանները, մատենագիրները, որոնք դեռ երէկ հիանում էին նրանով, խոնարհվում էին նրա տաղանդի, գրական արժէքի առաջ, դաքարէական պապանձումն են պահպանում զզուելի ոճրագործութեան հանդէպ, որովհետև վախենում են գրգռել սազերին:

Որպիսի բարոյական անկումն... հայ մտքի և գրչի: Կարելի է լինել կուսակցական, բայց մի գրող, որ ինքն իր գրուածքներով ամբողջ ժամանակ հարուածել է ոճիրները, ուրիշների պակասութիւնները, մտրակել է հասարակական ախտերը, ուրեմն յաւակնութիւն է ունեցել ժողովրդի, հասարակութեան քարոզիչ լինել, ճշմարտութեան անունից խօսել, այդպիսի գրողը անձնական կամ կուսակցական գծում և շահասիրական նկատումներով չը պէտք է լուռ մնայ, եթէ չէ կամենում պատմութեան առաջ դատապարտութեան ենթարկվել...:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՄԱՔՍ ՎԻԼՀԵԼՄ ՎՈՒՆԴ

Հասարակական կեանքը ենթակայ է մշտական փոփոխութիւնների, քանի որ նրա մէջ գործող պատճառները և ներքին դրդիչները չեն կարող մշտօրէն նոյնը մնալ, ուստի և դրանց փոփոխութեանը և յաջորդականութեանը անպայմանօրէն պէտք է հետևէր հասարակական կեանքի այլևայլ տեսակները որակված բոլորովին տարբեր յատկանիշներով: Նոյնն է այդ օրէնքը ինչպէս ամեն, նոյնպէս և մեր հասարակութեան համար, որը ներկայումս գտնվում է մի անձայր պետական շրջանի մէջ, քանի որ տափակութիւնը, անգիտականութիւնը, ցիտատաբանութիւնը և բրօշիւրագիտութիւնը թագաւորում է այնտեղ բացարձակօրէն, ուր մահացած ու թաղված գիտականութեան և գիտական բարեխղճութեան ողորմելի մնացորդների վրա բարձրանում է մտաւոր ամլութիւնը և սպեցիֆիկ «հայկական պեդանտիզմը»: Եւ ահա այդպիսի մի շրջանում ապրող հասարակութեան տալ մի մեծ մարդու գործերի թռուցիկ նկարագիրը՝ անշահեկան նկատվել չէ կարող երբէք. մի մեծ մարդ, որի մէջ, կարծես, մարդկային մարմինը անհետանում է, որպէսզի գիտականը, պաշտելի կուռքը, ուր կենտրոնանում են մարդկային ամենաբարձր ձգտումների տեսակները, աւելի որոշակի փայլէ: Այդ մարդն է 76 տարեն ոտք դնող՝ Լայպցիգի համալսարանի ներկայ ծերունի պրոֆեսոր Մաքս Վիլհելմ Վունդը: Վերջապէս, մեր հասարակութիւնը ևս պէտք է ծանօթանայ և ոգևորվի սովորել այնպիսի տիպերով և դէմքերով, որպիսիք ինքը իր միջից արտադրել չի կարող, և պէտք է վարժվէ գիտութեան իդէալներ այլ հասարակութիւնների ստեղծագործութիւնների մէջ որոնելուն, որով նա գոնէ այն գոհացուցիչ եզրակացութեանը գալ կարող է, որ մարդկային ստեղծագործող միտքը այնպէս անսահմանափակ ու անորակ չէ, ինչպէս մեզ

---

*) Խմբագրութիւնս ստացել է այդ պատճէնը, որն աւելորդ ենք համարում տպագրութեան յանձնել:

Խմբ.

մօտ, որ այլ երկնակամարների տակ ծաղկում են մարդկային աշխատանքի և ստեղծագործութեան այլ ձևի պսակներ:

Վունդը, որի ծննդեան 75-ամեակը անցեալ տարի լրացաւ և տօնվեց, ծնվել է 1832 թ., համալսարանական կրթութիւնը ստացել է Տիւրինգէնի, Հայդելբերգի և Բեռլինի համալսարաններում. Նա իսկապէս ուսել է բժշկութիւն, որը սակայն համարեա իր կեանքում չէ գործադրել, բացառութեամբ մի քանի դէպքերի: Հէնց ուսանողութեան ժամանակ առանձին սէր էր ցոյց տալիս դէպի ֆիզիօլօգիական խնդիրը, նոյնիսկ նրա դիսերտացիան այդ շրջանից է վերցված: Ապագայ մեծ փիլիսոփայի այս հակումը իր կատարեալ բողբոջմանը հասնել կարող էր, քանի որ նրան վիճակված էր աշխատել ժամանակի, ինչպէս և ներկայի համար ևս ամենայայտնի ֆիզիօլօգներ Միւլլէրի և Հելմհօլցի հսկողութեան տակ: Ֆիզիօլօգիական խնդիրների քննութիւնը Վունդին հարկադրեց ծանօթանալ և զբաղվել հոգեբանութեան հետ, որտեղից փիլիսոփայութեան անցնելը շատ մօտ էր, և նա իսկապէս էլ բարեբաղդաբար անցաւ փիլիսոփայութեանը. պրոֆէսորական գործունէութիւնը սկսում է նախ Հայդելբերգի համալսարանում. ապա 1874 թ. հրաւիրվում է Ցիւրիխի համալսարանը, ուր մի փոքր ժամանակ մնալուց յետոյ, 1875 թ. հրաւիրվում է Լայպցիգի համալսարանը իբրև փիլիսոփայութեան պրոֆէսոր, ուր և մինչև օրս կարդում է իր դասախօսութիւնները: Եւ ահա ճիշտ 50 տարուց աւելի է, որ այդ մարդը ապրում է և աշխատում է միմիայն գիտութեան և նրա առաջադիմութեան համար. սակայն գիտութիւն խօսքի տակ ոչ թէ պէտք է նրա որևէ ճիւղը հասկանալ, ինչպէս այդ սովորաբար ենթադրվում է ամեն մի սովորական մարդու համար, այլ իր նշանակութեան ամենալայն մտքով, որովհետև այդ զարմանալի մարդը իր ոյժերը փորձել է մարդկային մտքին ծանօթ համարեա բոլոր գիտութիւնների շրջանում, և պէտք է ասել՝ ոչ թէ նա այդ բոլորը խուզարկել և կամ սովորել է հետաքրքրութիւնից դրդված, միայն սովորած լինելու համար, այլ նա ստեղծող է եղել բոլոր մասերում և նորանոր հայեցակէտեր և նոր մշակումների դռներ է բացել բազմաթիւ գիտական ճիւղերի համար: Լօգիկան Վունդի այդ ճիւղին վերաբերող աշխատանքներից յետոյ մտնում է նոյն շրջանի մէջ, նոյնը և հոգեբանութիւնը, նոյնը և բարոյագիտութիւնը և այլն և այլն: Նա այս բազմաթիւ գիտութիւններից անցնելով բարձրանում է իր փիլիսոփայական սիստեմին:

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱ

Թէև ասում են՝ «մեռնելուց յետոյ կամ լաւ, կամ ոչինչ», բայց անկարելի է անտես առնել այնպիսի անհատների կեանքը, որոնք իրանց լաւ կամ վատ կողմերով ուրոյն դեր են խաղացել մարդկային հասարակա-քաղաքական գործերում: Այդպիսիներից մէկն էր վերջերս Եգիպտոսում վախճանված «Ալ-Լիվա» արաբերէն թերթի խմբագիր Քեամիլ Մուստաֆա փաշան: Ինչպէս յայտնի է, Աբդիւլ-Համիդը իր հնչուն, դեղին լիրաներով շատ մեծ գործեր է կատարել, շատ ստրկահոգի ու շահամոլ դիպլօմատիական ու յեղափոխական գործիչների, շատ քսու հրապարակախօսների և գրչավաճառ ժուռնալիստների իր ձեռքին կոյր գործիք ու ագէնտ է դարձրել: Եւ զուր չէ, որ նա միշտ կրկնում է Նապօլէօնի հռչակաւոր ֆրազը. «Մարդիկ ոսկով կշտացող խոզեր են. ձգեցէք նրանց առաջ մի բուռն ոսկի և ուր կամենաք—կը տանէք նրանց»:

Բայց նա որքա՜ն գեղեցիկ ուսումնասիրել է մարդկային հոգու բացասական կարողութիւնները:

Մուստաֆա Քեամիլ փաշան, որ վախճանվեց երիտասարդ հասակում, Եգիպտական հին-ազնուական ընտանիքի ծագում ունէր, և ստացել էր՝ եւրոպական մտքով վերցրած՝ կանօնաւոր կրթութիւն: Նրա հռչակաւոր «Ալ-Լիվա» (Դրօշակ) թերթը 1901 թւից սկսած երդուեալ պանիսլամականների օրգանն էր հանդիսանում: Յանձին Քեամիլ փաշայի, այդ թւից պանիսլամական պրոպագանդան որքան հնարաւոր էր սկսվեց տարածվել ի սփիւռս աշխարհի գտնվող հաւատացեալ մուսուլմանների մէջ: Այդպիսով կարելի է համարձակ շեշտել, որ պանիսլամիզմի ամենազօրեղ ներկայացուցիչներից և հիմնադիրներից մէկն էլ Քեամիլ փաշան էր հանդիսանում: Այդ միսիայի համար պէտք է խոստովանել, որ նա ունէր և՛ մտքի պաշար և՛ ուժեղ գրիչ և՛ կամքի ոյժ—այսինքն այն բոլոր կարողութիւնները, որ յատուկ են բոլոր գործիչներին: Նա թէև շատ աշխատեց համիսլամական շարժմանը եւրոպական մտածողութեամբ հայրենասիրական սաստ տալ, բայց հազիւ թէ այդ աջողվէր նրան:

Ինչպէս յայտնի է, համիսլամականութեան հիմքը դրել է Աբդիւլ-Համիդը: Նա հէնց իր գահը բարձրանալու օրից, կայսրութիւնը աւելի հաստատուն հիմքերի վրա դնելու համար, 2 խոշոր նպատակ ընտրեց. ա) որպէս բացարձակ աշխարհիկ միապետ իր ընդարձակ և խայտաբղէտ կայսրութիւնը կառավարելու և բ) ամեն միջոց գործ դնել երկրագնդիս վրա գտնվող 300 միլիօն մահմեդականութեան հոգեւոր գլուխ և մարգարէի հարազատ յաջորդ՝ «խալիֆ» հանդիսանալու: Ուրիշ խօսքով՝ սուլթանութիւնը ձուլել խալիֆայութեան հետ: Նրա կարծիքով, համայն մահմեդականութիւնը իր հետ կապողը լինելու են աշխարհիկ ոյժերից աւելի ուժեղ ղուրանի չոր ու ցամաք դօգմաները և կրօնական յիշաչար ֆանատիզմը: Բայց թէ որքան կենսունակութիւն, որքան աջողութիւն կարող էր ունենալ միստիկ անուրջների վրա հաստատված մի անբնական վարդապետութիւն, մի երազ, մի ցնորք—որ նա չէ բղխում կենսական ենթակայ իրականութիւնից—այդ՝ Աբդիւլ-Համիդի և Քեամիլ փաշաների նման թթու իդէօլօգների ուղեղը չէ զբաղեցնում: Միթէ Մահմէդի օրրանի՝ Մեքքայի առաջին նշանակալից ապստամբութիւնը ամենազօրեղ փաստը չէր համիսլամութեան անկենսունակութեանը, նրա մեռնելուն: Բայց՝ թողնենք այդ:

Մուստաֆա Քեամիլ փաշան, դեռ ուսանող եղած ժամանակ, եւրոպական ժուռնալներում տեղաւորած կրօնա-շովինիստական, մանաւանդ դէպի անգլիական նենգ դիւանագիտութիւնը տածած իր կրակոտ յօդուածներով՝ ամենակարճ ժամանակամիջոցում անգլիական դիւանագէտների և ժուռնալիստների ուշադրութիւնը իր կողմը դարձրեց: Նրա՝ կարճ ժամանակեայ համիսլամական պրոպագանդայի աջողութեանը՝ բրօշիւրների ու թռուցիկների յեղյեղվելուն նպաստում էին անպայման սուլթան Համիդի առատ դեղին ոսկիները և նրա արքայական խրախուսանքներն ու հոգևոր խրատները:

Սա այն Մուստաֆա փաշան էր, որ իր արժանաւոր կոլլէգ ու ոչ պակաս իդէօլօգ Մուհամմէդ Բարակուլլայի հետ ձեռք-ձեռքի տուած մի արտասովոր եռանդով, մինչև անգամ եւրոպական հանդէսներում, ասպարէզ էր գալիս առանց կարմրելու ապացուցանելու, որ «եթէ մուսուլմանները ատում են Եւրոպային, նրա քաղաքակրթութեանը և մի խօսքով այն բոլորին, ինչ որ Եւրոպայից է ծագում առնում, այդ բոլորը պէտք է վերագրել այն հանգամանքին, որ Եւրոպան ճնշելով մուսուլմաններին՝ խլում է նրանցից ինքնուրոյնութիւն, ազատութիւն, ազգայնութիւն»: Այո՛, Մուստաֆա Քեամիլ փաշան էր, որ ցոյց էր տալիս Եւրոպային՝ «Եւրոպան ոչ ուսումնասիրել է մուսուլմանական կրօնը, ոչ նրա անցեալ մեծութիւնը, ոչ նրա՝ աշխարհիս տուած քաղաքակրթութիւնը: Մահմեդականները իրանց երկիրներում կատարեալ ազատութիւն են տալիս քրիստոնեաներին և նրանց հետ թուրքերը միշտ խաղաղ են ապրել և միայն Եւրոպան է, որ ներկայումս խանգարում է Թիւրքիայի կուլտուրական ու քաղաքական գործերը», որ՝ վերջապէս՝ «Եւրոպան կապեց Իսլամի որդիների ոտները, կտրեց ձեռքերը, իսկ այժմս էլ իր խաղաղ կուլտուրական առաջխաղացութեամբ և խոշոր ինդուստրիայով կտրում է մեր ամենակենսական մասերը: Դա՝ մեր ամբողջական կործանումը կը լինի»: Մօտաւորապէս այդպիսի տենդենցիօզ գոհարներով լի է եղել նրա ուժեղ յօդուածները:

Ինչ ասել կուզի, որ Քեամիլ փաշան միևնոյն ժամանակ սուլթան Համիդի անձնականութեան ամենաջերմ երկրպագուներից մէկն էր: Իսլամի ապագայ փառքը միմիայն նրա անձնական արժանաւորութեան և դիւանագիտական անզուգական ընդունակութեան մէջն էր գտնում: «Սուլթան-Համիդի կրօնա-աշխարհիկ աստուածատուր մեծութեամբ և նրա ընդունակութեամբ միայն կարող է իսլամը ազատվել քրիստոնեաների ճանկերից»,—գրում է նա:

Արաբական ա. ապստամբութեան ժամանակ նա իր ապերախտ ու դաւաճան արաբ հայրենակիցների հասցէին սոսկալի շանթեր էր տեղացնում—«որոնք նենգ ու ստոր անգլիացիների ձեռքին կոյր գործիք դառնալով, դաւաճանեցին մեծ մարգարէի յաջորդ՝ օսմանեան վեհափառ Համիդին»:

Վերջապէս Քեամիլ փաշան էլ մշտապէս գոռում էր. «Իսլամի որդիների համար բացի Ալլահից ուրիշ Ալլահ չը կայ և բացի Աբդիւլ-Համիդից ուրիշ փադիշահ չը կայ»:

Յամենայն դէպս, յանձին Քեամիլ-Մուստաֆա փաշայի համիսլամութիւնը կորցրեց իր խոշոր ու տաղանդաւոր գործիչներից մէկին:

Արամ Գիւրջեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

18 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Դումայական նախահաշւի մասնաժողովը առաջարկում է հետևեալ բանաձևը՝ պետական կօնտրօլի եկամուտի և ծախքերի նախահաշւի վերաբերութեամբ, հերթական գործերի անցնելու համար.

«Ընդունելով, որ իր աշխատանքի կանոնաւորութեան համար պետական կօնտրօլը պէտք է վերակազմութեան ենթարկվի, նա պէտք է լինի անկախ և ինքնուրոյն բոլոր միւս վարչութիւններից, որ պետական կօնտրօլը չը պէտք է պաշտօնավարէ մինիստրների խորհրդում, որ գործի աջողութեան համար պետական կօնտրօլը պէտք է յարաբերութեանց մէջ լինի օրէնսդրական հաստատութիւնների հետ՝ նախահաշւի ֆինանսական հարցերը նախնական կերպով մշակելու ժամանակ, որ բոլոր հսկողութիւնները պետական միջոցների ծախսման ստուգութեան գործում պետական կօնտրօլի վրայից պէտք է վերցվեն,—Դուման անցնում է հերթական գործերին»:

19 մարտի

ՌԻԳԱ: Ժամանեց փոխ-ծովակալ Սկրիդլօվը և ծովապետ Էսսէնի հետ դիտեց Էսսէնի էսկադրայի ականանաւերը:

Արտաքին

18 մարտի

ՎԻԷՆՆԱ: Իշխան Բիւլօվը մեկնեց Բեռլին:

ԼՕՆԴՕՆ: Պետական գանձատան ստատս-սեկրետար Ասկվիտ համայնքների պալատում յայտնեց, որ պարլամենտի նիստերը Զատկի տօների առիթով ընդհատվում են մինչև ապրիլի 14-ը:

ՀԱԱԳԱ: Առաջին պալատը ընդունեց այն արձանագրութիւնը, որից երևում է, որ Ռուսաստանը միացել է բրիւսէլեան շաքարի պայմանագրին: Ֆինանսների մինիստրը նորից հաստատեց իր խոստումը, որ կառավարութիւնը լրացուցիչ տուրք է վերցնելու ռուսական շաքարից, հէնց որ նա ճնշէ Նիդէրլանդեան շուկան:

ՊԷԿԻՆ: Վերջին օրերս քաղաքի զանազան մասերում շարունակ հրդեհներ են տեղի ունենում: Հրդեհների պատճառ համարում են յեղափոխականներին, որոնց մի մասը ձերբակալված է: Կարծում են, որ յեղափոխականները հրդեհումներով աշխատում են երկիւղ ազդել թէ իշխանութիւններին և թէ ազգաբնակութեան հակադինաստիական անկարգութիւններ առաջացնելու համար բարեյաջող հող պատրաստելու:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

19 մարտի 1908 թ.

Տոկոսաբեր արժէթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	346 ր.	— կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	258 ր.	— կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	235 ր.	50 կ.
4% Պետական Րենտա	76 ր.	75 կ.
5% փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	85 ր.	— կ.
4½% փ. թ. Պետ. » » »	78 ր.	75 կ.
4% փ. թ. Պետ. » » »	73 ր.	— կ.
3½% Գրաւ. թ. Պետ. » »	70 ր.	25 կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	85 ր.	75 կ.
4½% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	78 ր.	75 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր.	75 կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր.	75 կ.
5% » » » » II	96 ր.	75 կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	95 ր.	25 կ.

ԲՈՐՍԱ

Լօնդօնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր.	75 կ.
Բեռլինի վրա 100 մարկը »	46 ր.	81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր.	1 կ.
Նաւթ. Թղթ. Նոբել ընկ. »	11,300 ր.	— կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4100 ր.	— կ.
Բագուի ընկ. » »	509 ր.	— կ.
Մանթաշեանի » »	157 ր.	— կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—17

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԴԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտ ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-°
Тифлисъ. Михайловск. пр. № 55.
25—8

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:
(10, 20 30) 50—6



ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ!
Տղամարդկանց գրպանի ժամացոյցներ բաց (ոչ ոսկեջրած), իսկական ամերիկական «Սօլօ» ոսկուց, գեղեցիկ քանդակով: 56 պրօբի ոսկու ժամացոյցներից մասնագէտն էլ չի զանազանի: Այդ ժամացոյցը «Anker» (և ոչ թէ ցիլինդր) լաւագոյն կօնստրուկցիան ունի, քոքվում է 36 ժամը մի անգամ, ամենաուղիղ և ճիշտ ընթացք: Երաշխաւորութիւն 6 տարով: Գինը 12 ր. տեղ միայն 3 ր. 25 կ., երկու հատը—6 ր., նոյնպիսիները, կանանց—4 ր.: Ձրի ուղարկվում են՝ 1) զրահաւոր շղթայ նոյն նիւթից, 2) բրէլօկ-բինօկլ ամենագեղեցիկ, հետաքրքիր տեսարաններով, 3) զամշի քսակ ժամացոյցը փչանալուց ազատելու համար: Հասցէ. Генеральное представительство часовъ «С О Л О». Т-во АПОЛЛО, ВАРШАВА М. 1-е почтовое отдѣленіе: Դարսելու և ուղարկելու համար մէկ կամ չորս ժամացոյցի համար—50 կ., Սիբիր—75 կ., առանց կանխավճարի Սիբիր չէ ուղարկվում: Ուղարկում ենք վերադիր վճարով: Գրագրութիւն ռուսերէն և գերմաներէն լեզուներով:
(12, 20) (10,074) 2—2



ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՍԵՒԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում:
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա:
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(Տ. կ.) 100—12

Типографія „Экономія“ Авака Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская т. д. Семинаріи № 3.